COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Ստրասբուրգ, 2008 թվականի մայիսի 5

ACFC/31DOC(2008)001

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 2008 թվականի փետրվարի 27-ին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ 5

ՄԱՍ I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 16

ՄԱՍ II. ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ 18

1. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԵՎ ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ 18

2. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 15-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ 19

ա) Առդյունավետ մասնակցությունը, լիարժեք եւ գործուն հավասարությունը եւ ազգային փոքրամասնությունների ինքնության եւ մշակույթի խթանումը 21

բ) Արդյունավետ մասնակցություն «ազգային փոքրամասնություններին առնչվող հարցերին» 22

գ) Մասնակցության «արդյունավետությունը» 23

դ) Ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցությունը եւ միջմշակութային երկխոսությունը 24

ՄԱՍ III. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ 26

1) ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ 26

ա) Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ վիճակագրական տվյալների հասանելիությունը 28

բ) Սոցիալ-տնտեսական կյանքում խտրականությունն արգելող օրենսդրություն 29

գ) Հանրային ծառայությունների կարողությունները՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց սոցիալ-տնտեսական կարիքները բավարարելու համար 31

դ) Տնտեսապես ծանր պայմաններում գտնվող շրջաններում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունը սոցիալ-տնտեսական կյանքին 32

ե) Սոցիալապես անապահով փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունը սոցիալ-տնտեսական կյանքին 34

զ) Հողի եւ գույքի հասանելիությունը՝ որպես սոցիալ-տնտեսական կյանքում մասնակցության համար անհրաժեշտ պայման 35

է) Բնակության վայրը, լեզուն եւ այլ պահանջները որպես սոցիալ-տնտեսական կյանքում մասնակցություն ապահովելու պայման..... 37

ը) Բնակարանային ապահովման ստանդարտները եւ մասնակցությունը սոցիալ-տնտեսական կյանքին 39

թ) Առողջապահությունը եւ մասնակցությունը սոցիալ-տնտեսական կյանքին... 40

2) ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ 42
3) ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ 44

ա) Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունն օրենսդրական գործընթացին..... 46

i. Քաղաքական կուսակցությունները 46

ii. Ընտրական համակարգերի կառուցվածքն ազգային, տարածաշրջանային եւ տեղական մակարդակներում 48

iii. Վարչական սահմանները եւ ընտրատարածքները..... 50

iv. Հատկացված տեղերի համակարգը 51

v. Խորհրդարանական գործելակերպը 52

vi. «Վետոյի» իրավունքը..... 53

vii. Քաղաքացիության պահանջները..... 54

viii. Լեզվի իմացության պահանջները 55

բ) Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը մասնագիտացված պետական մարմինների միջոցով..... 55

գ) Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը խորհրդատվական մեխանիզմների միջոցով 56

i. Խորհրդատվական մեխանիզմների ստեղծումը..... 56

ii. Խորհրդատվական մեխանիզմների ներկայացվածությունը..... 58

iii. Խորհրդատվական մեխանիզմների տեսակները 59

iv. Խորհրդատվական մարմինների դերն ու գործունեությունը 60

դ) Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ներկայացուցչությունն ու մասնակցությունը հանրային կառավարմանը, դատաիրավական եւ գործադիր գործընթացներին 61

ե) Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունը տեղական կառավարման ձեւերի միջոցով 64

զ) Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը ինքնավարության կարգավորումների միջոցով 66

է) Ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը՝ փոքրամասնություններին առնչվող գործունեության համար 67

ը) Լրատվամիջոցը՝ որպես ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց հանրային քաղաքականության մեջ արդյունավետ մասնակցությունն ապահովող աղբյուր 68

թ) Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը Շրջանակային կոնվենցիայի դիտանցմանը 69

ՄԱՍ IV. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 71

ՀԱՎԵԼՎԱԾ. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 15-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 74

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

«Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի 15–րդ հոդվածը սահմանում է, որ Կողմ հանդիսացող պետությունները «ստեղծում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ մշակութային, հասարակական, տնտեսական կյանքին եւ հանրային քաղաքականությանը, մասնավորապես, իրենց վերաբերող հարցերին արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ պայմաններ»:

Սույն Մեկնաբանության նպատակն է սահմանել Խորհրդատվական կոմիտեի մեկնաբանումները Շրջանակային կոնվենցիայի՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությանն առնչվող դրույթների վերաբերյալ՝ հիմնվելով Խորհրդատվական կոմիտեի կողմից կոնկրետ երկրների համար կազմված եւ 1999–2007թթ. ընդունված եզրակացությունների վրա: Մեկնաբանության նպատակն է օգտակար գործիք տրամադրել պետական մարմիններին եւ որոշումների ընդունման գործընթացի սուբյեկտներին, պետական պաշտոնյաներին, փոքրամասնությունների կազմակերպություններին, հասարակական կազմակերպություններին, գիտաշխատողներին եւ փոքրամասնությունների պաշտպանության մեջ ներգրավված շահագրգիռ կողմերին:

Մեկնաբանությունը նախեւառաջ կենտրոնանում է մասնակցության ապահովման մեխանիզմների վրա ներպետական մակարդակում, եւ վճռորոշ է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ներգրավված լինեն նաեւ միջազգային իրավական գործիքների, մասնավորապես, Շրջանակային կոնվենցիայի դիտանցման եւ կիրարկման գործընթացի բոլոր փուլերում՝ հավասարակշռված եւ որակյալ արդյունքի հասնելու համար:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ

մասնակցությունը ներառում է նրանց տնտեսական եւ հասարակական կյանքը, ինչպես նաեւ նրանց ներգրավվածությունը քաղաքական եւ սոցիալական ոլորտներում:

Արդյունավետ մասնակցություն ապահովելու համար անհրաժեշտ է, որ պետությունները ոչ միայն վերացնեն փոքրամասնությունների՝ տնտեսական ոլորտի մատչելիության եւ սոցիալական ծառայություններից հավասարապես օգտվելու հնարավորությունը սահմանափակող խոչընդոտները՝ հավասար հնարավորություններ ստեղծելու նպատակով, այլեւ խթանեն նրանց մասնակցությունը ստացվող օգուտների եւ արդյունքների բաշխման գործընթացին:

Հավաստի եւ հեշտ հասանելի տեղեկություններն էական նախապայման են՝ սոցիալ–տնտեսական խտրականության դեմ պայքարի արդյունավետ միջոցներ մշակելու եւ արդյունավետ հավասարություն խթանելու համար: Այդ պատճառով, Կողմ հանդիսացող պետությունները պետք է պարբերաբար հավաքեն թարմացված տվյալներ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց սոցիալ–տնտեսական եւ կրթական վիճակի վերաբերյալ՝ դրանք բնակչության մեծամասնության վիճակի հետ համեմատելու համար: Նման տվյալները պետք է հավաքվեն անհատական տվյալների պաշտպանության մասին միջազգային չափանիշներին համապատասխան:

Սոցիալ–տնտեսական կյանքին արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ է համապարփակ օրենսդրության առկայություն, որն արգելում է էթնիկական ծագման հիմքերով խտրականության դրսեւորումը պետական եւ մասնավոր հատվածի սուբյեկտների կողմից: Սույն օրենսդրությունը պետք է տարածվի զբաղվածության, բնակարանային ապահովման, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության վրա: Կարեւոր է նաեւ ապահովել համապատասխան իրավական պաշտպանության միջոցների հասանելիությունը խտրականության դեպքերի համար՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ազգային փոքրամասնություններին պատկանող կանանց նկատմամբ բազմակի խտրականության դրսեւորումներին:

Վարչական բնույթի խոչընդոտները եւ ազգային փոքրամասնությունների մշակութային առանձնահատկությունների եւ հատուկ կարիքների ընկալման ինստիտուցիոնալ բացը երբեմն խաթարում են վերջիններիս մասնակցությունը սոցիալ–տնտեսական կյանքին: Կողմ հանդիսացող պետությունները պետք է մշակեն վերապատրաստման դասընթացներ հանրային ծառայողների համար, որպեսզի վերջիններս կարողանան համարժեք արձագանքել ազգային փոքրամասնությունների կարիքներին:

Հանրային ծառայությունների եւ սոցիալական ապահովության հաստատությունների մասին տեղեկությունները պետք է հեշտ հասանելի լինեն եւ, հարկ եղած դեպքում, առկա լինեն ազգային փոքրամասնությունների լեզուներով: Պետական հաստատությունները պետք է խթանեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց աշխատանքի ընդունելու եւ նրանց աշխատատեղերը պահպանելու գործընթացը:

Ձեռնարկվելիք հատուկ միջոցների թիրախը պետք է լինեն ազգային փոքրամասնություններին պատկանող այն անձինք, ովքեր բնակվում են տնտեսապես ծանր պայմաններում գտնվող շրջաններում, ինչպիսիք են գյուղական, մեկուսացված եւ սահմանամերձ տարածքները, պատերազմի հետեւանքով վնաս կրած տարածքները կամ ապաարդյունաբերականացման ենթարկված շրջանները՝ սոցիալ–տնտեսական արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար: Նման միջոցները, համապատասխան դեպքում, խթանվում են երկկողմ եւ միջսահմանային համագործակցության միջոցով:

Ավելին, հաճախ անհրաժեշտ է ձեռնարկել հատուկ հասարակական եւ տնտեսական միջոցներ՝ ուղղված փոքրամասնությունների սոցիալապես անապահով խմբերին պատկանող անձանց՝ նրանց արդյունավետ հավասարությունն ապահովելու համար:

Սոցիալ–տնտեսական կյանքում գնչուների եւ թափառական ցեղերի արդյունավետ ինտեգրումը խթանելու նպատակով անհրաժեշտ է մշակել եւ արդյունավետորեն իրականացնել համալիր եւ երկարաժամկետ ռազմավարություններ: Այս

ռազմավարությունների իրականացումը պետք է դիտանցվի, իսկ արդյունքները գնահատվեն շահագրգիռ կողմի հետ սերտ համագործակցությամբ:

Կողմ հանդիսացող պետությունները պետք է վերացնեն անհարկի խոչընդոտները եւ այն ավելորդ կարգավորումները, որոնք խոչընդոտում են փոքրամասնությունների որոշակի խմբերին բնորոշ՝ վտանգված տնտեսական գործունեության իրականացմանը:

Մասնավորեցման գործընթացում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար լիարժեք եւ արդյունավետ հավասարություն երաշխավորելու նպատակով իշխանությունները պետք է ոչ միայն ապահովեն թափանցիկություն, այլ նաեւ սահմանեն դիտանցման եւ գնահատման մեխանիզմներ: Զինված ընդհարումներից հետո, Կողմ հանդիսացող պետությունները պետք է ապահովեն, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից ներկայացված գույքային պահանջներին ընթացք տրվի, եւ դրանք լուծում ստանան արդյունավետ, թափանցիկ եւ ոչ խտրական եղանակով:

Որոշակի խմբերին պատկանող անձանց, օրինակ՝ բնիկ ժողովուրդների կողմից ավանդաբար օգտագործվող հողերը պետք է պաշտպանվեն առանձնահատուկ եւ արդյունավետ կերպով: Այս խմբերի ներկայացուցիչները պետք է անմիջականորեն ընդգրկվեն՝ իրենց բնակության ավանդական տարածքներում հողային իրավունքների եւ հողի օգտագործման վերաբերյալ որոշումների ընդունման ցանկացած գործընթացին:

Աշխատանքային շուկայի, հիմնական սոցիալական նպաստների եւ հանրային ծառայությունների հասանելիությունը չպետք է սահմանափակվի բնակության վայրի կամ լեզվի նկատմամբ ներկայացվող այնպիսի անհարկի պահանջներով, որոնք, մասնավորապես, ազդում են որոշ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց վրա: Միեւնույն ժամանակ, Կողմ հանդիսացող պետությունները պետք է ապահովեն, որ բնակության վայրի գրանցման գործընթացները լինեն մատչելի եւ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց նկատմամբ չառաջացնեն

ուղղակի կամ անուղղակի խտրականություն, ինչպես նաեւ կանոնավոր կերպով դիտանցվեն:

Բնակարանային ապահովման ոլորտում Կողմ հանդիսացող պետությունները պետք է վճռական միջոցներ ձեռնարկեն՝ խտրական գործելակերպերին վերջ տալու համար, որոնք հանգեցնում են որոշակի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մեկուսացմանը եւ դուրս մղմանը: Ավելին, նրանք պետք է մշակեն ոլորտային համալիր քաղաքականության ուղղություններ՝ լուծելու համար չափանիշներին չհամապատասխանելու մասով բնակարանային ապահովման, ինչպես նաեւ հիմնական ենթակառուցվածքների սահմանափակ հասանելիության խնդիրները, որոնք, մասնավորապես, ազդում են որոշ փոքրամասնություններին պատկանող անձանց վրա:

Առողջապահական ոլորտում Կողմ հանդիսացող պետությունները պետք է ապահովեն տվյալ փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ ներգրավվածությունն առողջապահական խնդիրներին ուղղված միջոցների մշակման, կիրառման եւ գնահատման գործընթացում՝ վերջիններիս հատուկ կարիքներին առավել արդյունավետ արձագանքելու համար: Առողջապահական ծառայություններ մատուցող բուժական եւ վարչական անձնակազմը պետք է անցնի համապատասխան վերապատրաստում, իսկ ազգային փոքրամասնություններին պատկանող առողջապահական միջնորդներին աշխատանքի ընդունելը պետք է խրախուսվի:

Ավելին, հավասար հնարավորություններ խթանող քաղաքականության ուղղությունները չպետք է սահմանափակվեն միայն առողջապահական ոլորտի մատչելիությամբ: Դրանք պետք է ուղղված լինեն նաեւ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար այնպիսի որակյալ ծառայություններ ապահովելուն, որոնք նույն ազդեցությունն ունեն, ինչ բնակչության մնացած մասին տրամադրվող ծառայությունները:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հարող մշակութային քաղաքականության ուղղություններ մշակելիս եւ կիրառելիս՝ էական է, որ իշխանությունները պատշաճորեն խորհրդակցեն այդ ազգային փոքրամասնությունների հետ եւ ներգրավեն նրանց որոշումների ընդունման գործընթացում՝ վերջիններիս կարիքներն արդյունավետ կերպով բավարարելու նպատակով: Սա հավասարապես կիրառվում է փոքրամասնությունների մշակույթներին հանրային աջակցություն ցուցաբերելու գործընթացում:

Ապակենտրոնացման գործընթացները, ինչպես նաեւ մշակութային ինքնավարություն ունենալու իրավասության պատվիրակումը կարող են կարեւոր դեր կատարել՝ թույլատրելով ազգային փոքրամասնություններին արդյունավետորեն մասնակցելու մշակութային կյանքին:

Լրատվամիջոցները կենտրոնական դեր են կատարում մշակութային կյանքում. հաշվի առնելով նշվածը՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք պետք է կարողանան ստեղծել եւ օգտագործել իրենց սեփական լրատվամիջոցները: Հավասարապես կարեւոր է, որ նրանք ներկայացվեն հիմնական լրատվամիջոցներում՝ հասարակության լայն շերտերին հուզող հարցերի շուրջ իրենց տեսակետն արտահայտելու համար:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք կարող են մասնակցություն ունենալ հանրային քաղաքականությանը մի շարք կարգավորումների միջոցով, ինչպիսիք են ներկայացվածությունն ընտրովի մարմիններում եւ պետական կառավարման բոլոր մակարդակներում, խորհրդատվական մեխանիզմները կամ մշակութային ինքնավարության կարգավորումները: Առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել ազգային փոքրամասնություններին պատկանող կանանց եւ տղամարդկանց հավասարակշիռ ներկայացվածությանը:

Չնայած ընտրովի մարմիններում փոքրամասնությունների ներկայացվածությունը կարող է ապահովվել կոնկրետ քաղաքական կուսակցություններ ձեւավորելուց տարբեր այլ միջոցներով, այնուամենայնիվ, քաղաքական կուսակցություններ ձեւավորելն օրենսդրությամբ՝ էթնիկ կամ կրոնական հիմքերով արգելելը կարող է հանգեցնել միավորման ազատության իրավունքի անհարկի սահմանափակումների: Ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի միջազգային իրավունքի նորմերում ամրագրված սկզբունքներին: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շահերը ներկայացնող կամ խթանող կուսակցություններն ընտրությունների ժամանակ պետք է քարոզարշավին մասնակցելու համարժեք հնարավորություններ ունենան:

Պատշաճ խորհրդակցությունից հետո, սահմանադրական երաշխիքները պետք է համակցվեն օրենսդրության արդյունավետ կիրարկմամբ՝ ապահովելու համար ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը: Ցանկացած կարգավորում ընտրելու դեպքում, խորհուրդ է տրվում իրականացնել պարբերական դիտարկումներ՝ ապահովելու համար, որ դրանք համարժեք արտացոլեն հասարակության զարգացումները:

Որպես կանոն, պետք է աջակցել՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ներկայացվածությունն ընտրովի մարմիններում դյուրացնող միջոցների իրականացմանը: Սահմանաչափ նախատեսող պահանջներից ազատումը, հատկացված տեղերը կամ վետոյի իրավունքը հաճախ օգտակար են եղել՝ ընտրովի մարմիններում վերջիններիս մասնակցությունն ընդլայնելու համար: Այնուամենայնիվ, նման կարգավորումների զուտ ներմուծումը մեխանիկորեն չի ապահովում, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք իրական եւ էական ազդեցություն ունենան որոշումներ ընդունման գործընթացի վրա: Որոշակի կոնկրետ հանգամանքներում «վետոյի» կամ «քվազի վետոյի» իրավունքի համակարգը կարող է նույնիսկ խարխլել պետական կառույցները: Նման դեպքերում, անհրաժեշտ է սահմանել այլընտրանքային միջոցներ, որոնք հնարավորություն կտան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց

մասնակցել որոշումների ընդունման գործընթացին:

Փոքրամասնությունների հարցերով զբաղվող խորհրդարանական կոմիտեների ներմուծումը կարող է նպաստել՝ խորհրդարանի օրակարգում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հուզող հարցերի հրատապությունն ապահովելու համար:Այդ հուզող հարցերը, այնուամենայնիվ, պետք է շեշտվեն նաեւ այլ խորհրդարանական կոմիտեներում:

Այն, թե ինչպես են սահմանվում ընտրատարածքները կամ վարչական սահմանները, կարող է ազդեցություն ունենալ փոքրամասնությունների մասնակցության վրա: Պետությունները պետք է ապահովեն, որ ընտրատարածքների փոփոխությունները չնվազեցնեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ընտրվելու հնարավորությունները:

Քաղաքացիությունը կարեւոր տարր է, որը կարող է ազդել հանրային քաղաքականության մեջ փոքրամասնությունների մասնակցության վրա: Թեեւ իրավաչափ չէ քաղաքացի չհանդիսացողների նկատմամբ ընտրելու եւ ընտրվելու իրավունքի հետ կապված որոշ սահմանափակումներ սահմանելը, այդուհանդերձ այդ սահմանափակումները չպետք է կիրառվեն հարկ եղածից ավելի չափով: Պետություններին խրախուսվում է ոչ քաղաքացիներին ապահովել տեղական ընտրություններում ընտրելու եւ իրենց թեկնածությունն առաջադրելու հնարավորությամբ: Խորհրդարանական եւ տեղական ընտրություններում թեկնածուների նկատմամբ սահմանված՝ լեզվի իմացության պահանջներն անհամատեղելի են Շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածի հետ, քանի որ դրանք բացասական ազդեցություն են ունենում հանրային քաղաքականության մեջ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցության վրա:

Խորհրդատվական մեխանիզմները լրացուցիչ միջոց են՝ հնարավորություն տալու համար ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցելու որոշումների ընդունման գործընթացին: Այնուամենայնիվ, ինչպես զուտ

ներկայացվածությունն ընտրովի մարմիններում չի կարող բավարար լինել որոշումների ընդունման գործընթացի վրա էական ազդեցություն ունենալու համար, այնպես էլ զուտ խորհրդատվությունը բավարար մեխանիզմ չէ՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար: Հիշելով, որ անհրաժեշտ է հաշվի առնել ազգային իրավիճակը, պետություններին պետք է խրախուսել մշակելու այնպիսի համակարգ, որը կապահովի ազգային փոքրամասնությունների թե՛ ներկայացվածությունը եւ թե՛ խորհրդատվությունը:

Խորհրդատվական մարմինները պետք է ունենան հստակ իրավաբանական կարգավիճակ, եւ նրանց դիմելը խորհրդատվություն ստանալու նպատակով պետք է ամրագրվի օրենքով: Ավելին, որոշումների ընդունման գործընթացում ներգրավվածությունը պետք է կրի կանոնավոր եւ մշտական բնույթ: Անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ապահովվի խորհրդատվական մարմինների ներառական եւ ներկայացված բնույթը: Նշանակումներ կատարելու գործընթացը պետք է լինի թափանցիկ եւ մշակվի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ սերտ խորհրդատվությամբ: Դրանք պետք է պարբերաբար վերանայվեն՝ ապահովելու համար, որ տվյալ մարմինները ներկայացնեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շրջանում առկա տեսակետների լայն շրջանակը: Խորհրդատվական մարմինները պետք է նաեւ կանոնավոր կերպով անդրադառնան ավելի սակավաթիվ փոքրամասնություններին եւ ավանդական կամ զգալի թվով փոքրամասնություններով բնակեցված տարածքներից դուրս բնակվող ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հուզող հարցերին:

Պետական կառավարման մարմինները, դատական համակարգը, իրավապահ եւ գործադիր մարմինները պետք է հնարավորինս արտացոլեն հասարակության բազմազանությունը: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է խթանել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց աշխատանքի վերցնելը պետական հատվածում: Այնուամենայնիվ, պետք է խուսափել տարբեր խմբերի

ներկայացվածությունը խիստ մաթեմատիկական հավասարությամբ ապահովելուն ուղղված միջոցների կիրառումից: Պետական կառավարման անձնակազմի նկատմամբ սահմանվող՝ պետական լեզվի իմացության պահանջները պետք է նախատեսեն ավելին, քան անհրաժեշտ է տվյալ պաշտոնի կամ ծառայության համար: Անհրաժեշտ է խիստ ուշադրություն դարձնել գնչուներին եւ թափառական ցեղերին, ինչպես նաեւ ավելի սակավաթիվ ազգային փոքրամասնություններին, ովքեր հաճախ պատշաճորեն ներկայացված չեն պետական կառավարման համակարգում:

Պետություններին պետք է խրախուսել հիմնադրելու պետական կառույցներ, որոնք զբաղվում են ազգային փոքրամասնությունների հարցերով: Այս կառույցների դերը պետք է կայանա փոքրամասնությունների պաշտպանության ոլորտում պետական քաղաքականություն նախաձեռնելու եւ այն համակարգելու մեջ: Շատ կարեւոր է, մի կողմից, այս կառույցների, իսկ մյուս կողմից՝ փոքրամասնություններին առնչվող խորհրդատվական մեխանիզմների եւ այլ կառավարական կառույցների միջեւ համակարգումը: Նման կարգավորումները կարող են օգնել ապահովելու, որպեսզի պետական քաղաքականության ուղղություններում փոքրամասնություններին հուզող խնդիրներին առաջնահերթություն տրվի:

Պետության սահմանադրական կառուցվածքը կարող է վճռորոշ դեր ունենալ քաղաքական կյանքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցության վրա: Հիշելով, որ անհրաժեշտ է հաշվի առնել ազգային իրավիճակը, կառավարման ենթաազգային ձեւերը եւ փոքրամասնությունների ինքնավար ինքնակառավարման մարմինները կարող են արժեքավոր գործիքներ լինել, որոնք կխթանեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունը կյանքի տարբեր ոլորտներում: Անկախ պետության սահմանադրական կառուցվածքից, պետական կենտրոնական մարմինները պետք է հավատարիմ մնան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց նկատմամբ ստանձնած՝ միջազգային եւ ազգային օրենսդրական շրջանակներից բխող իրենց պատասխանատվությանը:

Անհրաժեշտ է հասանելի դարձնել համապատասխան մարդկային եւ ֆինանսական ռեսուրսների առկայությունը՝ հնարավորություն տալով փոքրամասնությունների խնդիրներով զբաղվող մարմիններին արդյունավետորեն կատարելու իրենց աշխատանքը:

Կարեւոր է, որ թե՛ հիմնական, եւ թե՛ փոքրամասնությունների լրատվամիջոցները պատշաճորեն իրազեկեն հանրությանն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց առնչվող քաղաքական հարցերի վերաբերյալ: Հետեւաբար, կարեւոր է ապահովել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պատշաճ մասնակցությունը լրատվամիջոցների հետ կապված տարբեր մարմիններին, ինչպիսիք են վերահսկիչ խորհուրդները եւ անկախ կարգավորող մարմինները, պետական հեռարձակման ծառայությունների կոմիտեները եւ աուդիտորների խորհուրդները:

ՄԱՍ Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Կարեւոր է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը հանրային կյանքի տարբեր ոլորտներում՝ ապահովելու համար սոցիալական համախմբվածություն եւ իրապես ժողովրդավարական հասարակության զարգացում: «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի[1] (այսուհետ՝ «Շրջանակային կոնվենցիա») 15–րդ հոդվածը սահմանում է, որ Կողմ հանդիսացող պետությունները «ստեղծում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ մշակութային, սոցիալական, տնտեսական եւ կյանքին ու հանրային քաղաքականությանը, մասնավորապես, իրենց վերաբերող հարցերին արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ պայմաններ»:

2. Հաշվի առնելով ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանության համար արդյունավետ մասնակցության կարեւորությունը՝ Շրջանակային կոնվենցիայի հարցերով Խորհրդատվական կոմիտեն (այսուհետ՝ «Խորհրդատվական կոմիտե») որոշեց իր երկրորդ թեմատիկ մեկնաբանությունը նվիրել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ սոցիալական, տնտեսական, մշակութային կյանքին ու հանրային քաղաքականությանն արդյունավետ մասնակցությանը: Սույն Մեկնաբանության գլխավոր նպատակն է լուսաբանել Խորհրդատվական կոմիտեի տրամադրած մեկնաբանությունը Շրջանակային կոնվենցիայի՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությանն առնչվող դրույթների վերաբերյալ՝ հիմնվելով դրա կողմից կոնկրետ երկրների համար կազմված եւ 1999–2007թթ. ընդունված եզրակացությունների վրա: Մեկնաբանությունն ուղղված է օգտակար գործիք տրամադրելու պետական մարմիններին եւ որոշումների ընդունման

[1] 1994 թվականին ընդունված՝ «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» Շրջանակային կոնվենցիան Եվրոպայի խորհրդի հիմնական փաստաթղթային գործիքն է՝ ուղղված ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանությանը: Այն ուժի մեջ է մտել 1998 թվականին եւ մինչ օրս վավերացվել է 39 անդամ պետությունների կողմից:

գործընթացի սուբյեկտներին, պետական պաշտոնյաներին, փոքրամասնությունների կազմակերպություններին, հասարակական կազմակերպություններին, գիտաշխատողներին եւ փոքրամասնությունների պաշտպանության հարցերով զբաղվող այլ շահագրգիռ կողմերին:

3. Մեկնաբանության Նախնական դիտարկումներում ներկայացված է մասնակցության կարեւորությունը եւ դրա առնչությունը Շրջանակային կոնվենցիայով երաշխավորված այլ իրավունքներից արդյունավետորեն օգտվելու հետ: Մեկնաբանության մեջ ինքնին վերլուծվում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցության վերաբերյալ ստացված մի շարք առանցքային արդյունքներ, որոնք, մասնավորապես, նշված են կոնկրետ երկրների համար կազմված եզրակացություններում՝ համաձայն Շրջանակային կոնվենցիայի (Մաս III) տարբեր հոդվածների: Մեկնաբանության եզրակացություններում լուսաբանվում են այս ոլորտում առկա հիմնական մարտահրավերները, եւ սահմանվում են այն ոլորտները, որոնք հետագայում պետք է լրացուցիչ ուշադրության արժանանան Խորհրդատվական կոմիտեի կողմից ըստ երկրների կատարվող դիտանցման ժամանակ: Հավելվածում ներառված է 15–րդ հոդվածի եւ Շրջանակային կոնվենցիայի այլ հոդվածների միջեւ առկա կապերի վերլուծությունը: Սույն Մեկնաբանությունը պետք է ընկալվի որպես գործող փաստաթուղթ, որն անհրաժեշտ է հետագայում մշակել որպես դիտանցման միջոց՝ Շրջանակային կոնվենցիայի ներքո գրանցված առաջընթացի շրջանակներում:

4. Սույն Մեկնաբանությունը մշակելիս, Խորհրդատվական կոմիտեն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների եւ կազմակերպությունների, գիտաշխատողների եւ այլ շահագրգիռ կողմերի հետ իրականացրել է լայնածավալ խորհրդատվություններ՝ ապահովելու համար, որ Մեկնաբանությունը լինի հնարավորինս համապարփակ եւ պատշաճորեն արտացոլի այն հիմնական մարտահրավերները, որոնց դիմակայում են ազգային փոքրամասնությունները:

ՄԱՍ II. ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

1. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԵՎ ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

5. Ազգային փոքրամասնությունների, ինչպես նաեւ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ ամրագրված «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» Շրջանակային կոնվենցիայով, մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անբաժանելի մասն է կազմում:[2] Հետեւաբար, Շրջանակային կոնվենցիայի 15–րդ հոդվածով սահմանված՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ մշակութային, սոցիալական, տնտեսական կյանքին եւ հանրային քաղաքականությանն արդյունավետ մասնակցության իրավունքը նույնպես մարդու իրավունքների միջազգային պաշտպանության մասն է կազմում:

6. Չնայած Շրջանակային կոնվենցիայով պաշտպանվում են ազգային փոքրամասնություններին պատկանող առանձին անձանց իրավունքները,[3] այդուհանդերձ, որոշ իրավունքների, այդ թվում՝ արդյունավետ մասնակցության իրավունքի իրականացումը, կրում են կոլեկտիվ բնույթ: Սա նշանակում է, որ որոշ իրավունքներից կարելի է արդյունավետորեն օգտվել միայն ազգային փոքրամասնություններին պատկանող այլ անձանց հետ համատեղ:[4]

---

[2] Տե՛ս Շրջանակային կոնվենցիայի 1-ին հոդվածը:

[3] Տե՛ս Շրջանակային կոնվենցիային կից բացատրական հաշվետվությունը Շրջանակային կոնվենցիայի 1-ին հոդվածի 31-րդ պարբերության վերաբերյալ:

[4] Տե՛ս Շրջանակային կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը. «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք կարող են օգտվել սույն Շրջանակային կոնվենցիայով ամրագրված սկզբունքներից բխող իրավունքներից եւ ազատություններից անհատապես կամ այլ

7. Բացի Շրջանակային կոնվենցիայից, առկա են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությանն առնչվող միջազգային այլ փաստաթղթեր: Սույն Մեկնաբանությունը պատրաստելիս՝ Խորհրդատվական կոմիտեն հաշվի է առել այս միջազգային փաստաթղթերում առկա ստանդարտները: Դրանք տարբերակվում են սկսած պարտադիր իրավական ուժ ունեցող ստանդարտներից մինչեւ հանձնարարականներ եւ ուղեցույցներ: Պարտադիր իրավական ուժ ունեցող ստանդարտներում ներառված են «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում եւ դրան առնչվող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, ինչպես նաեւ վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայում կամ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ եվրոպական խարտիայում ամրագրված ստանդարտները: Ազգային փոքրամասնությունների գծով ԵԱՀԿ Գերագույն հանձնակատարի կողմից հրատարակված՝ «Քաղաքական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության մասին» Լունդյան հանձնարարականները նույնպես մանրամասն ուսումնասիրվել են Խորհրդատվական կոմիտեի կողմից՝ Շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածի վերլուծության շրջանակներում: Միավորված ազգերի կազմակերպությունը նույնպես նպաստել է մասնակցության ոլորտում նորմերի մշակման գործընթացին, մասնավորապես, «Ազգային կամ էթնիկ, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին» հռչակագրի (ընդունված 1992 թվականին), «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագրի (ընդունված 2007 թվականին) եւ, առավել ընդհանուր մակարդակով՝ «Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի միջոցով:

2. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 15-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

8. 15-րդ հոդվածը Շրջանակային կոնվենցիայի կենտրոնական դրույթ է

անձանց հետ համատեղ»:

բազմաթիվ առումներով: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ կյանքի տարբեր ոլորտներում մասնակցության աստիճանը կարող է համարվել հասարակության բազմակարծության եւ ժողովրդավարության մակարդակի ցուցանիշներից մեկը: Այդ իսկ պատճառով, Կողմ հանդիսացող պետությունները պետք է համարեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունն ապահովող պայմաններ ստեղծելը որպես բազմակարծիք հասարակությունում արդյունավետ կառավարման սկզբունքների կիրարկման անբաժանելի մաս:

9. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը որոշիչ է նաեւ սոցիալական համախմբվածությունը խորացնելու հարցում, քանի որ ազգային փոքրամասնություններին հասարակության մարգինալ շերտերում պահելը կարող է հանգեցնել սոցիալական մեկուսացման եւ խմբերի միջեւ լարվածությունների: Սոցիալ–տնտեսական կյանքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մարգինալացումը կարող է անդրադառնալ ամբողջ երկրի վրա՝ վտանգելով վերջիններիս կողմից հասարակությանը ցուցաբերած օժանդակությունը եւ լրացուցիչ ներդրումները:

10. Ինչպես Շրջանակային կոնվենցիայի այլ դրույթներով, այնպես էլ 15–րդ հոդվածով Կողմ հանդիսացող պետությունների համար ենթադրվում է արդյունքի պարտավորություն՝ նրանք ապահովում են, որ գործեն արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ պայմանները, սակայն այս նպատակին հասնելու առավել համապատասխան միջոցների ընտրությունը թողնվում է նրանց հայեցողությանը: Սույն Մեկնաբանության նպատակն է Կողմ հանդիսացող պետություններին տրամադրել առկա փորձի վերլուծություն՝ օգնելու համար նրանց գտնելու ամենաարդյունավետ տարբերակը:

11. Հասարակությունում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը խթանելու համար անհրաժեշտ է շարունակական եւ առարկայական երկխոսություն թե՛ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ու մեծամասնություն կազմող

բնակչության եւ թե՛ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ու իշխանությունների միջեւ: Երկխոսության այս երկու ուղղությունները կարելի է ապահովել միայն կիրառելով հաղորդակցման արդյունավետ ուղիներ:

12. Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ Շրջանակային կոնվենցիայի համաձայն սահմանված դիտանցման մեխանիզմն ինքնին արժեքավոր գործընթաց է՝ դյուրացնելու համար ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց եւ իշխանությունների միջեւ երկխոսությունը:

ա) Արդյունավետ մասնակցությունը, լիարժեք եւ գործուն հավասարությունը եւ ազգային փոքրամասնությունների ինքնության եւ մշակույթի խթանումը

13. Թեեւ 15–րդ հոդվածը Շրջանակային կոնվենցիայի՝ արդյունավետ մասնակցության իրավունքին նվիրված կենտրոնական դրույթն է, մասնակցությունը նաեւ առանցքային կարեւորություն ունի Կոնվենցիայով պաշտպանվող այլ իրավունքներից լիարժեքորեն օգտվելու համար:[5] Այս համատեքստում 15–րդ հոդվածի եւ 4–րդ ու 5–րդ հոդվածների միջեւ հարաբերությունը առանձնահատուկ կարեւորություն ունի: Ըստ էության, 15–րդ, 4–րդ եւ 5–րդ հոդվածները կարել է դիտարկել որպես եռանկյունու երեք անկյուններ, որոնք միասին կազմում են Շրջանակային կոնվենցիայի հիմնարար դրույթները:

14. 4–րդ հոդվածով պահանջվում է, որ պետությունները կյանքի բոլոր ոլորտներում խթանեն լիարժեք եւ գործուն հավասարություն փոքրամասնություններին պատկանող անձանց համար: Սա ենթադրում է օրենքով հավասարապես պաշտպանվելու եւ օրենքի առաջ հավասարության իրավունք ինչպես նաեւ էթնիկ ծագման ու այլ հիմքերով խտրականության բոլոր ձեւերից պաշտպանված լինելու իրավունք: Ավելին, լիարժեք եւ արդյունավետ հավասարությունը նաեւ ենթադրում է, որ իշխանությունները պետք է հատուկ միջոցներ ձեռնարկեն նախկին կամ կառուցվածքային անհավասարությունները հաղթահարելու համար եւ ապահովեն, որ թե՛ ազգային փոքրամասնություններին

[5] Տե՛ս Մեկնաբանության Հավելվածը:

պատկանող, եւ թե՛ բնակչության մեծամասնություն կազմող անձինք ունենան հավասար հնարավորություններ տարբեր ոլորտներում: 5–րդ հոդվածով ենթադրվում է, որ Կողմ հանդիսացող պետությունները պարտավոր են «խթանել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար անհրաժեշտ պայմանները, որպեսզի նրանք կարողանան պահպանել եւ զարգացնել իրենց մշակույթը, ինչպես նաեւ պահպանեն իրենց ինքնության էական տարրերը, այն է՝ կրոնը, լեզուն, ավանդույթները եւ մշակութային ժառանգությունը»՝ *արդյունավետորեն* երաշխավորելու համար նրանց ինքնության իրավունքը:

15. Արդյունավետ մասնակցության իրավունքը՝ ամրագրված 15–րդ հոդվածով, հնարավորություն է տալիս, որպեսզի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հուզող՝ լիարժեք եւ արդյունավետ հավասարության, ինչպես նաեւ իրենց առանձնահատուկ ինքնությունը պահպանելու եւ զարգացնելու իրավունքին առնչվող հարցերը լսելի լինեն եւ արդյունավետորեն հաշվի առնվեն:

բ) Արդյունավետ մասնակցություն «ազգային փոքրամասնություններին առնչվող հարցերին»

16. 15–րդ հոդվածով պահանջվում է, որ պետությունները ստեղծեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից տարբեր հարցերին, *մասնավորապես, իրենց վրա անդրադարձող խնդիրներին*՝ արդյունավետ մասնակցություն ունենալու համար անհրաժեշտ պայմանները: 15–րդ հոդվածի սույն մասով պահանջվում է, որ Կողմ հանդիսացող պետություններն առանձնահատուկ ուշադրություն դարձնեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ներգրավելուն, մասնավորապես, նրանց առնչվող հարցերով որոշումների ընդունման գործընթացին: Խորհրդատվական կոմիտեն լայնածավալ մեկնաբանություններ է արել պետությունների կողմից սահմանված՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին՝ խորհրդատվական եւ իրենց առնչվող հարցերով որոշումների ընդունման գործընթացին մասնակից դարձնելու տարբեր մեխանիզմների վերաբերյալ: Այս մեկնաբանությունները կենտրոնանում են ազգային փոքրամասնություններին կոնկրետ մշակութային, սոցիալական եւ

տնտեսական քաղաքականության ուղղություններին, ինչպես նաեւ հանրային քաղաքականությանն առնչվող հարցերով որոշումների ընդունման գործընթացին մասնակից դարձնելու մեխանիզմների վրա:

17. Միեւնույն ժամանակ, Խորհրդատվական կոմիտեն հաճախ ընդգծել է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք նույնպես պետք է խոսքի իրավունք ունենան այն հարցերի առնչությամբ, որոնք չեն վերաբերում բացառապես իրենց, սակայն անդրադառնում են նրանց՝ որպես ամբողջական հասարակության անդամների վրա: Հանրային քաղաքականությանը մասնակցությունն իրապես կարեւոր է ոչ միայն ապահովելու համար, որ հաշվի առնվեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հուզող կոնկրետ հարցերը, այլեւ հնարավորություն տալու համար նրանց ազդեցություն ունենալու հասարակության զարգացման ընդհանուր ուղղվածության վրա:

գ) Մասնակցության «արդյունավետությունը»

18. 15–րդ հոդվածի հետ կապված մեկ այլ առանցքային խնդիր է «արդյունավետություն» հասկացության նշանակությունը փոքրամասնությունների մասնակցության համատեքստում: Մասնակցության «արդյունավետությունը» հնարավոր չէ սահմանել եւ չափել վերացական ձեւով: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցության արդյունավետությունը քննարկելիս՝ Խորհրդատվական կոմիտեն ոչ միայն ուսումնասիրել է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց լիարժեք եւ արդյունավետ հավասարությունը խթանող միջոցները, այլեւ հաշվի է առել դրանց ազդեցությունը տվյալ անձանց իրավիճակի եւ, ընդհանուր առմամբ՝ հասարակության վրա: Այս ազդեցությունը չափվում է թե՛ որակապես, եւ թե՛ քանակապես եւ կարող է դիտարկվել տարբեր տեսանկյուններից տարբեր սուբյեկտների կողմից՝ կախված գործընթացում նրանց ներգրավվածության աստիճանից:

19. Հետեւաբար, Կողմ հանդիսացող պետությունների կողմից ազգային

փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունը պաշտոնապես ապահովելը բավարար չէ: Նրանք պետք է նաեւ ապահովեն, որ իրենց մասնակցությունն զգալի ազդեցություն ունենա ընդունվող որոշումների վրա եւ հնարավորության սահմաններում առկա լինի համատեղ պատասխանատվություն ընդունված որոշումների նկատմամբ:

20. Նմանապես, Կողմ հանդիսացող պետությունների կողմից ընդունված՝ սոցիալ-տնտեսական կյանքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունը բարելավելու միջոցները պետք է ազդեցություն ունենան վերջիններիս՝ որպես անհատ տնտեսվարող սուբյեկտների՝ աշխատաշուկա մուտք գործելու վրա, նրանց համար սոցիալական պաշտպանության հասանելիության եւ, վերջապես՝ նրանց կյանքի որակի վրա: Լիարժեք եւ արդյունավետ հավասարությունն այս համատեքստում կարող է դիտարկվել որպես արդյունավետ մասնակցության արդյունք:

21. Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար որոշումների ընդունման գործընթացին արդյունավետ մասնակցությունը կարող է մարտահրավեր լինել: Սա ենթադրում է ժամանակի եւ ռեսուրսների բաշխում ոչ միայն մասնակցության նպատակով, այլեւ փորձելու համար ճշգրտորեն արտացոլել իրենց ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց շրջանում առկա տեսակետների բազմազանությունը: Հետեւաբար, ազգային փոքրամասնությունների համար պահանջվում է եւ՛ կարողությունների զարգացում, եւ՛ ռեսուրսներ՝ ապահովելու համար նրանց ներկայացուցիչների կողմից արդյունավետ ներդրումը:

դ) Ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցությունը եւ միջմշակութային երկխոսությունը

22. 15–րդ հոդվածը նախատեսված է նաեւ դյուրացնելու միջմշակութային երկխոսությունը՝ հնարավորություն տալով ազգային փոքրամասնություններին լինելու տեսանելի, լսելի եւ արդյունավետորեն մասնակցելու որոշումների ընդունման գործընթացին, այդ թվում՝ մասնակցելու լայն հասարակությանն առնչվող հարցերի

քննարկմանը: Ըստ էության, երկխոսությունը չպետք է սահմանափակվի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների եւ իշխանությունների մասնակցությամբ, այլ պետք է ընդգրկի հասարակության բոլոր շերտերը: Շրջանակային կոնվենցիայով նախատեսված է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց տրամադրել լայն հնարավորություններ՝ մասնակցելու համար հասարակության հիմնական մասին եւ, միեւնույն ժամանակ, տրամադրել նման հնարավորություններ մեծամասնություն կազմող բնակչությանը՝ ավելի լավ ծանոթանալու համար ազգային փոքրամասնությունների մշակույթին, լեզվին եւ պատմությանը՝ միջմշակութային երկխոսության ոգով:[6]

[6] Տե՛ս նաեւ Շրջանակային կոնվենցիայի 6.1 հոդվածը:

ՄԱՍ III. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ

1) ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ

23. Խորհրդատվական կոմիտեն հաճախակի նշել է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց *արդյունավետ* մասնակցությունը չի կարող սահմանափակվել միայն հանրային քաղաքականությանը նրանց մասնակցությամբ, եւ որ արդյունավետ մասնակցությունը տնտեսական եւ սոցիալական կյանքին նույնքան կարեւոր է, որքան նրանց մասնակցությունը հանրային քաղաքականությանը՝ Եվրոպական սոցիալական խարտիայի եւ վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի սկզբունքներին համապատասխան:

24. Սոցիալական եւ տնտեսական կյանքին մասնակցությունը ներառում է հիմնահարցերի լայն շրջանակ՝ սկսած պատշաճ բնակարանային, առողջապահական, սոցիալական պաշտպանության (սոցիալական ապահովագրություն եւ սոցիալական նպաստներ) ապահովման մատչելիությունից մինչեւ սոցիալական ապահովություն ծառայություններ եւ աշխատանքի հասանելիություն: Տնտեսական կյանքին ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությամբ ենթադրվում է ինչպես պետական եւ մասնավոր հատվածի աշխատանքի շուկայի, այնպես էլ բիզնեսի եւ այլ ոչ վարձու աշխատանքի հնարավորությունների հասանելիություն: Դրանք էլ, իրենց հերթին, սերտորեն կապված են գույքային իրավունքների եւ սեփականաշնորհման գործընթացների հետ:

25. Կարեւոր է նաեւ հիշել, որ փոքրամասնությունների տարբեր խմբերին պատկանող անձինք տարբեր խոչընդոտների առջեւ են կանգնում սոցիալ–տնտեսական կյանքում իրենց մասնակցության ընթացքում: Որոշ խմբերին

պատկանող անձանց համար, ինչպիսիք են գնչուները եւ թափառական ցեղերը կամ բնիկ ժողովուրդները, առավել մեծ է սոցիալ–տնտեսական կյանքից մեկուսացման վտանգը քան այլ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կամ մեծամասնություն կազմող բնակչության համար: Այս խմբերի կարիքներին արձագանքելու համար կարող են պահանջվել հատուկ միջոցներ:

26. Սոցիալական եւ տնտեսական կյանքում արդյունավետ մասնակցություն ապահովելու համար, մասնավորապես, պահանջվում է, որ Կողմ հանդիսացող պետությունները վերացնեն՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից տնտեսական կյանքի տարբեր ոլորտներ հավասարապես մուտք գործելը եւ սոցիալական ծառայություններից հավասարապես օգտվելը խոչընդոտող արգելքները ու խթանեն նրանց համար աշխատանքի եւ շուկայի, ինչպես նաեւ մի շարք հասարակական ծառայություններից, այդ թվում՝ սոցիալական բնակարանային եւ առողջապահական ծառայություններից օգտվելու հավասար հնարավորությունների հասանելիությունը:

27. Ավելին, հավասար հնարավորությունները չպետք է սահմանափակվեն շուկաների եւ ծառայությունների հավասար հասանելիությունն ապահովելով: Արդյունավետ մասնակցություն ապահովելու համար պահանջվում է նաեւ, որ Կողմ հանդիսացող պետությունները խթանեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունը տնտեսական եւ սոցիալական կյանքին, ինչպես նաեւ սոցիալական եւ տնտեսական ոլորտների արտոնություններին եւ արդյունքներին, որն, ի թիվս այլոց, ներառում է տնտեսական զարգացումից, առողջապահական ծառայություններից, սոցիալական ապահովությունից եւ արտոնությունների այլ ձեւերից օգտվելու իրավունքը:

28. Այդ պատճառով, Խորհրդատվական կոմիտեի՝ ստորեւ ներկայացված եզրահանգումներն արվել են 15–րդ հոդվածի (արդյունավետ մասնակցություն) եւ 4–րդ հոդվածի (հավասար վերաբերմունք) առնչությամբ կատարված եզրահանգումների համախմբված վերլուծության հիման վրա:

29. Որոշ եզրահանգումներ վերաբերում են Կողմ հանդիսացող պետությունների մեծ մասին. դրանց թվում են ազգային փոքրամասնությունների սոցիալ–տնտեսական վիճակի վերաբերյալ վիճակագրական տվյալների պակասը եւ հանրային ծառայությունների կողմից ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կարիքներին ուղղված՝ երբեմն ոչ պատշաճ արձագանքը: Մյուսները վերաբերում են, մասնավորապես, որոշ երկրների կամ շրջանների կամ փոքրամասնությունների խմբերի՝ կապված հողի սեփականաշնորհման գործընթացում ծագող դժվարությունների եւ որոշ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից ավանդական գործունեություն իրականացնելու խոչընդոտների հետ:

ա) Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց սոցիալ–տնտեսական վիճակի վերաբերյալ վիճակագրական տվյալների հասանելիությունը

30. Կողմ հանդիսացող պետությունները պետք է պարբերաբար հավաքեն թարմացված տվյալներ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց սոցիալ–տնտեսական եւ կրթական վիճակի վերաբերյալ՝ դրանք բնակչության մեծամասնության վիճակի հետ համեմատելու համար: Ըստ տարիքի, սեռի եւ աշխարհագրական բաշխվածության տարանջատված հավաստի տվյալների հասանելիությունը կարեւոր պայման է նպատակային եւ կայուն՝ տվյալ անձանց կարիքները բավարարող միջոցների մշակման համար: Դա որոշիչ է նաեւ խտրականության դեմ պայքարի արդյունավետ քաղաքականության ուղղություններ եւ միջոցներ մշակելու համար այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են աշխատանքի եւ բնակարանային ապահովման հասանելիությունը: Բնակչության մարդահամարի արդյունքում հավաքված տվյալները, ընդհանուր առմամբ, բավարար չեն այս քաղաքականությունների եւ միջոցների համար որպես ամուր հիմք ծառայելու համար:

31. ,Ազգային փոքրամասնությունների վիճակի վերաբերյալ տվյալների հավաքումը պետք է կատարվի անհատական տվյալների պաշտպանության

միջազգային ստանդարտներին համապատասխան[7], ինչպես նաեւ պահպանելով ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքն ազատորեն ընտրելու՝ իրենց նկատմամբ որպես այդպիսին նման վերաբերմունք ցուցաբերելը կամ չցուցաբերելը: Հնարավորության դեպքում, շահագրգիռ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները պետք է ընդգրկվեն տվյալների հավաքման գործընթացում, մինչդեռ նման տվյալների հավաքագրման մեթոդները պետք է մշակվեն նրանց հետ սերտ համագործակցությամբ:

բ) Սոցիալ–տնտեսական կյանքում խտրականությունն արգելող օրենսդրություն

32. Խորհրդատվական կոմիտեն հաճախակի նկատել է, որ որոշ ազգային փոքրամասնությունների մոտ առկա է գործազրկության համաչափորեն ավելի բարձր մակարդակ, երբեմն զբաղվածության ավելի ցածր մակարդակ եւ, ընդհանուր առմամբ՝ աշխատանքի շուկայում մասնակցության ավելի ցածր մակարդակ, քան մեծամասնություն կազմող բնակչության մոտ: Նրանք կարող են առնչվել ուղղակի եւ անուղղակի խտրականության, կարիերայի զարգացման մեջ անհավասար վերաբերմունքի եւ հաճախ կառուցվածքային խոչընդոտների հետ (օրինակ, որեւէ կազմակերպությունում առաջխաղացման որոշակի շեմ):

33. Ազգային փոքրամասնությանը պատկանելության հիմքով խտրականությունն արգելող եւ պետական ու մասնավոր հատվածի սուբյեկտների կողմից զբաղվածության, բնակարանային ապահովման, առողջապահական եւ սոցիալական պաշտպանության ոլորտները կարգավորող համապարփակ օրենսդրության առկայությունը նախապայման է սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունը խթանելուն ուղղված ցանկացած քաղաքականության համար:

34. Այդ պատճառով, Խորհրդատվական կոմիտեն շարունակաբար պնդել է, որ

[7] Տե՛ս, օրինակ, «Անհատական տվյալների ավտոմատ մշակման առնչությամբ անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան (ETS 108) եւ Նախարարների կոմիտեի թիվ (97) 18 առաջարկությունը՝ վիճակագրական նպատակներով հավաքվող եւ մշակվող անհատական տվյալների պաշտպանության մասին:

անհրաժեշտ է կիրարկել խտրականության դեմ պայքարին ուղղված օրենսդրությունը կամ, հարկ եղած դեպքում՝ հետագայում այն մշակել եւ լիարժեքորեն կիրարկել՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց նկատմամբ, հատկապես, աշխատանքի շուկայում, բնակարանային ապահովման ոլորտում եւ առողջապահական ոլորտի աշխատողների կողմից դրսեւորվող խտրականությունը վերացնելու նպատակով: Սրանով ենթադրվում է նաեւ, որ անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ լայն հասարակության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար եւ բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ իրավապահ մարմիններին վերապատրաստելու նպատակով:

35. Կարեւոր է նաեւ համապատասխան իրավական պաշտպանության միջոցների առկայությունը խտրականության դրսեւորման դեպքերում: Կողմ հանդիսացող պետությունները պետք է բարձրացնեն իրազեկվածության մակարդակն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շրջանում՝ գործող պաշտպանության միջոցների վերաբերյալ, եւ ապահովեն, որ այդ միջոցները լինեն հեշտ հասանելի:

36. Ավելին, Խորհրդատվական կոմիտեն հաճախակի շեշտել է, որ ռասիզմը եւ խտրականությունը կարող են անհամաչափ ազդեցություն ունենալ հատկապես որոշ փոքրամասնությունների խմբերին պատկանող կանանց եւ աղջիկների վրա: Նրանք կարող են ենթարկվել բազմակի խտրականության՝ իրենց էթնիկ ծագման եւ սեռային պատկանելության հիմքով: Այդ պատճառով, անհրաժեշտ է ձեռնարկել նպատակային միջոցներ՝ ազգային փոքրամասնություններին պատկանող կանանց նկատմամբ դրսեւորված խտրականության կոնկրետ ձեւերից պաշտպանելու համար:[8]

[8] Տե՛ս, օրինակ, 2006 թվականի հոկտեմբերի 6-ին ընդունված՝ Իռլանդիայի վերաբերյալ երկրորդ եզրակացության 50-րդ եւ 51-րդ պարբերությունները:

գ) Հանրային ծառայությունների կարողությունները՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց սոցիալ-տնտեսական կարիքները բավարարելու համար

37. Վարչական բնույթի խոչընդոտները եւ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հատուկ կարիքների ընկալման բացակայությունը ինչպես նաեւ վարչարարության եւ հանրային ծառայությունների հետ կապված դժվարությունները երբեմն խաթարում են այդ անձանց մասնակցությունը սոցիալ–տնտեսական կյանքին: Որոշ դեպքերում, դժվարությունները ծագում են տվյալ վարչարարության՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հատուկ կարիքները հոգալու համար անհրաժեշտ՝ ոչ բավարար կարողությունների պատճառով: Վարչարարությունն ու հանրային ծառայությունները ներառում են կրթություն եւ այնպիսի սոցիալական ծառայություններ, ինչպիսիք են աշխատանքի տեղավորման ծառայությունները, սոցիալական ծառայությունները եւ սոցիալական նպաստներ տրամադրողները, առողջապահական եւ բնակարանային ապահովման ծառայությունները, հանրային տրանսպորտը եւ կոմունալ ծառայությունները, ինչպես նաեւ մարզական եւ հանգստի կազմակերպման ծառայությունները:

38. Կողմ հանդիսացող պետություններն, ըստ այդմ, պետք է ձեռնարկեն միջոցներ՝ հանրային ծառայությունների եւ սոցիալական ապահովության հաստատությունների աշխատակիցների ավելի լավ պատրաստվածությունն ապահովելու համար, որպեսզի վերջիններս կարողանան համարժեք արձագանքել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կարիքներին: Կարող է պահանջվել մասնագիտացված վերապատրաստում՝ ազգային փոքրամասնությունների համայնքներին պատկանող անձանց հատուկ կարիքների վերաբերյալ, ինչպես նաեւ այն սոցիալական եւ տնտեսական հատուկ խնդիրների վերաբերյալ, որոնք կարող են անդրադառնալ, մասնավորապես, որոշ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վրա: Ըստ էության, փոքրամասնությունների որոշ խմբերին պատկանող անձանց համար առավել մեծ է սոցիալական մեկուսացման վտանգը եւ սոցիալ-տնտեսական կյանքին նրանց

ինտեգրման համար հաճախ անհրաժեշտ են նպատակային մոտեցումներ, որոնք ամբողջությամբ հաշվի են առնում մշակութային եւ այլ հատուկ հանգամանքներ:

39. Հանրային ծառայությունները եւ սոցիալական ապահովության հաստատությունները պետք է լինեն հեշտ հասանելի եւ մատչելի ազգային փոքրամասնությունների համար: Սրանից ելնելով, կարող են անհրաժեշտ լինել մի շարք քարոզչական աշխատանքներ, ինչպես նաեւ այս ծառայությունների եւ հաստատությունների հարմարեցում՝ ապահովելու համար, որ վերջիններս կարողանան գործնականում հոգալ ազգային փոքրամասնությունների հատուկ կարիքներն այնքան արդյունավետորեն, որքան բավարարում են ընդհանուր բնակչության կարիքները:

40. Հանրային ծառայությունների եւ սոցիալական ապահովության հաստատությունների վերաբերյալ տեղեկությունները պետք է լինեն հեշտ հասանելի ու մատչելի եւ, հարկ եղած դեպքում, առկա լինեն ազգային փոքրամասնությունների լեզուներով:

41. Ավելին, Կողմ հանդիսացող պետությունները պետք է խթանեն վարչական եւ հանրային ծառայությունների համակարգում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց աշխատանքի վերցնելը, առաջխաղացումը եւ նրանց աշխատատեղերի պահպանումը թե՛ ազգային, եւ թե՛ տեղական մակարդակներով:

դ) Տնտեսապես ծանր պայմաններում գտնվող շրջաններում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունը սոցիալ-տնտեսական կյանքին

42. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք հաճախ բնակվում են սահմանամերձ գոտիներում եւ քաղաքական ու տնտեսական գործունեության կենտրոններից հեռու գտնվող այլ շրջաններում: Հետեւաբար, նրանք կարող են կանգնել ավելի բարդ սոցիալ-տնտեսական իրավիճակների առաջ, քան բնակչության մեծամասնությունը: Կողմ հանդիսացող պետությունները պետք է

հատուկ միջոցներ ձեռնարկեն՝ ավելացնելու համար սոցիալ–տնտեսական կյանքին մասնակցության հնարավորություններն ազգային փոքրամասնություններին պատկանող այն անձանց համար, որոնք բնակվում են ծայրամասային եւ (կամ) տնտեսապես ծանր պայմաններում գտնվող շրջաններում, ինչպիսիք են գյուղական, մեկուսացված եւ սահմանամերձ գոտիները, պատերազմի հետեւանքով վնաս կրած տարածքները կամ ապաարդյունաբերականացման ենթարկված շրջանները:[9]

43. Դրանք, անհրաժեշտության դեպքում, կարող են իրականացվել երկկողմ եւ միջսահմանային համագործակցության միջոցով: Սահմաններով իրականացվող առեւտուրը եւ այլ տնտեսական գործունեությունը կարող են տնտեսական եւ սոցիալական զարգացման կարեւոր գործոն լինել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար: Ըստ այդմ, Կողմ հանդիսացող պետությունները պետք է ապահովեն, որ միջսահմանային համագործակցությունը չսահմանափակվի անհարկի խոչընդոտներով:

44. Կողմ հանդիսացող պետությունները պետք է ապահովեն, որ տնտեսական ծանր պայմաններում գտնվող շրջաններին, այդ թվում՝ ներքաղաքային որոշ տարածքներին ուղղված տնտեսական վերականգնման ծրագրերը եւ տարածաշրջանային զարգացման նախաձեռնությունները մշակվեն եւ իրականացվեն այնպես, որ շահեկան լինեն նման շրջաններում ապրող ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շրջանում կարիքավորների համար: Նշվածն ապահովելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել ուսումնասիրություններ՝ գնահատելու համար զարգացման ծրագրերի հնարավոր ազդեցությունն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վրա: Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ազգային փոքրամասնությունների արմատներ ունեցող կանանց եւ երիտասարդների իրավիճակի վրա:

---

[9] Տե՛ս, օրինակ, 2002 թվականի մարտի 1-ին ընդունված՝ Ուկրաինայի վերաբերյալ 1-ին եզրակացության 73-րդ պարբերությունը եւ 2005 թվականի փետրվարի 24-ին ընդունված՝ Էստոնիայի վերաբերյալ 2-րդ եզրակացության 160-րդ պարբերությունը:

45. Իշխանությունները պետք է ապահովեն, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք լիարժեքորեն ներգրավվեն այն քաղաքականության ուղղությունների եւ ծրագրերի պլանավորմանը, իրականացմանը, դիտանցմանը եւ գնահատմանը, որոնք կարող են ազդեցություն ունենալ իրենց տնտեսական վիճակի եւ այն շրջանների վիճակի վրա, որտեղ նրանք ապրում են մեծ զանգվածներով:

46. Հետպատերազմյան իրավիճակներում, անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ազգային փոքրամասնություններին պատկանող այն անձանց սոցիալ–տնտեսական վիճակի վրա, որոնք ենթարկվել են խտրականություն ազգային փոքրամասնության պատկանելության հիմքով եւ զրկվել են աշխատանք ունենալու հնարավորությունից: Անհրաժեշտ է ձեռնարկել հատուկ միջոցներ՝ խտրականության նախկին դրսեւորումների հետեւանքները շտկելու եւ սոցիալ-տնտեսական կյանքում այդ անձանց մասնակցությունը խթանելու համար:[10]

ե) Սոցիալապես անապահով փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունը սոցիալ-տնտեսական կյանքին

47. Փոքրամասնությունների որոշակի խմբերին պատկանող անձինք, այդ թվում՝ գնչուները եւ թափառական ցեղերը, ինչպես նաեւ բնիկ ժողովուրդները, հաճախ ավելի մեծ դժվարությունների առաջ են կանգնում, քան ուրիշները՝ կապված աշխատանքի շուկա մուտք գործելու, կրթության եւ վերապատրաստման, բնակարանային ապահովման, առողջապահական եւ սոցիալական պաշտպանության հարցերի հետ: Տարբեր ոլորտներում առկա դժվարությունները հաճախ փոխկապակցված են եւ փոխլրացնող եւ կարող են հանգեցնել սոցիալ-տնտեսական մասնակցությունից մեկուսացնելու շղթային: Այս խմբերին պատկանող կանայք հաճախ առանձնահատուկ խոցելի են աղքատության եւ սոցիալական մեկուսացման առումով:

---

[10] Տե՛ս, օրինակ, 2004 թվականի հոկտեմբերի 1-ին ընդունված՝ Խորվաթիայի վերաբերյալ 2-րդ եզրակացության 60-ից 62-րդ պարբերությունները:

48. Ավելին, այս խմբերին պատկանող որոշակի թվով անձինք շարունակում են զբաղեցնել տնտեսական որոշակի շերտեր եւ զբաղվել այնպիսի ավանդական գործունեությամբ ու արհեստներով, որոնք երբեմն դժվար է պահպանել արագորեն փոփոխվող տնտեսական համատեքստում: Կողմ հանդիսացող պետությունները պետք է վերացնեն անհարկի խոչընդոտները, այդ թվում՝ ավելորդ կարգավորումները, որոնք խաթարում են որոշակի փոքրամասնությունների խմբերին ներհատուկ տնտեսական գործունեության իրականացումը: Սա պետք է հիշել՝ այս ոլորտում նոր կանոնակարգեր մշակելիս:

49. Փոքրամասնությունների սոցիալապես անապահով խմբերին պատկանող անձանց արդյունավետ ինտեգրումը սոցիալ-տնտեսական կյանքին խթանելու նպատակով անհրաժեշտ է մշակել եւ իրականացնել համալիր եւ երկարաժամկետ ռազմավարություններ: Եթե նման ռազմավարություններն առկա են, ապա անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դրանց արդյունավետ իրականացմանը: Անհրաժեշտ է ժամանակին տրամադրել համապատասխան ռեսուրսներ իրականացման բոլոր մակարդակներում, հատկապես՝ տեղական: Ավելին, նման քաղաքականության ուղղությունների իրականացումը պետք է մանրամասն դիտանցվի, իսկ դրանց հետեւանքները պետք է գնահատվեն՝ շահագրգիռ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ սերտ համագործակցությամբ՝ ժամանակի ընթացքում դրանք համապատասխանեցնելու եւ ամրապնդելու նպատակով: Դրանում ներգրավված տարբեր մարմինների կողմից ձեռնարկված միջոցների արդյունավետ համակարգումը պետք է առանցքային կարեւորություն ունենա:

զ) Հողի եւ գույքի հասանելիությունը՝ որպես սոցիալ-տնտեսական կյանքում մասնակցության համար անհրաժեշտ պայման

50. Գույքի (բնակարանային, առեւտրային կամ գյուղատնտեսական) հասանելիությունը խոչընդոտող գործոնները կարող են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վրա անհամաչափ ազդեցություն ունենալ՝ վատթարացնելով նրանց տնտեսական դժվարությունները եւ

գործազրկության վիճակը:

51. Սեփականության, այդ թվում՝ հողի նկատմամբ սեփականության անհավասար հասանելիությունը երբեմն կապված է սեփականաշնորհման գործընթացների եւ գույքի փոխհատուցման գործընթացների հետ, որոնք, որոշ դեպքերում, փոքրամասնությունների խոցելի խմբերի վրա անհամաչափ ազդեցություն են ունեցել: Ըստ այդմ, Կողմ հանդիսացող պետությունները պետք է ապահովեն սեփականաշնորհման եւ գույքի փոխհատուցման գործընթացների հավասար եւ արդար հասանելիությունը, քանի որ դրանք երկարաժամկետ նշանակություն են ունենում տնտեսական կյանքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցության համար: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար լիարժեք եւ արդյունավետ հավասարությունն ամրապնդելու նպատակով՝ իշխանությունները պետք է, մասնավորապես, ապահովեն, որ սեփականաշնորհման գործընթացը լինի թափանցիկ, ինչպես նաեւ սահմանեն մեխանիզմներ՝ սեփականաշնորհման գործընթացը դիտանցելու եւ դրա հետեւանքները պատշաճորեն գնահատելու համար: Ավելին, ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք պետք է արդյունավետորեն մասնակցեն դիտանցման եւ գնահատման այդ գործընթացներին:[11]

52. Գույքի ձեռքբերման հետ կապված հիմնական դժվարությունները կարող են բխել նաեւ զինված ընդհարումների եւ դրանց հաջորդող՝ բնակչության տեղահանման հետեւանքով: Կողմ հանդիսացող պետությունները պետք է ապահովեն, որ ազգային փոքրամասնությունների կողմից ներկայացված գույքային պահանջներին ընթացք տրվի եւ դրանք ուսումնասիրվեն արդյունավետ եւ թափանցիկ եղանակով ու չհանգեցնեն խտրականության դրսեւորումների:[12]

53. Հողային իրավունքների խախտումները կամ որոշակի խմբերի, օրինակ, բնիկ

---

[11] Տե՛ս, օրինակ, 2005 թվականի նոյեմբերի 25-ին ընդունված՝ Կոսովոյի վերաբերյալ եզրակացության (UNMIK) 115-րդ պարբերությունը:
[12] Տե՛ս, օրինակ, Կոսովոյի վերաբերյալ եզրակացության (UNMIK) 116-րդ պարբերությունը:

ժողովուրդների կողմից հողի օգտագործման սահմանափակումները կարող են էապես վնաս հասցնել սոցիալ-տնտեսական կյանքում վերջիններիս մասնակցությունը, քանի որ նրանց տնտեսական վիճակը սերտորեն կապված է հողի օգտագործման հետ: Այդ պատճառով, նրանց կողմից ավանդաբար օգտագործվող հողերը պետք է ապահովվեն առանձնահատուկ եւ արդյունավետ պաշտպանությամբ: Ավելին, բնիկ ժողովուրդների ներկայացուցիչները պետք է ակտիվորեն ներգրավված լինեն իրենց բնակության ավանդական տարածքներում հողի օգտագործմանն առնչվող որոշումների ընդունման գործընթացում:

է) Բնակության վայրը, լեզուն եւ այլ պահանջները որպես սոցիալ-տնտեսական կյանքում մասնակցություն ապահովելու պայման

54. Կողմ հանդիսացող որոշ պետություններում որոշ գործատուներ կամ պետությունն ինքը բնակության վայրի նկատմամբ պահանջներ է սահմանում՝ որպես աշխատանքի վերցնելու նախապայման[13] կամ մասնավոր բիզնեսը գրանցելու եւ վարելու համար. նման գործելակերպը կարող է անհամաչափ ազդեցություն ունենալ որոշակի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վրա: Իրենց բնակության վայրը գրանցելիս նրանք կարող են կանգնել կոնկրետ դժվարությունների առաջ վարչական կամ այլ բնույթի խոչընդոտների պատճառով: Բնակության վայրի նկատմամբ ներկայացվող պահանջի հետ կապված խնդիրները կարող են նաեւ խոչընդոտել հիմնական սոցիալական իրավունքների, ինչպիսիք են առողջապահությունը, գործազրկության մասով ծառայությունները եւ կենսաթոշակ ստանալու իրավունքների հասանելիությունը: Քոչվորական կյանք վարող ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք նույնպես կանգնում են՝ սոցիալ-տնտեսական կյանքում մասնակցության խոչընդոտների առաջ, երբ բնակության վայրի հետ կապված պահանջները հարմարեցված չեն նրանց կենսակերպին:

55. Ավելին, աշխատանքի որոշակի տեսակները գնահատելու կամ ապրանքներ

[13] Տե՛ս, օրինակ, Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ 2-րդ եզրակացության 59-րդ, 272-րդ եւ 273-րդ պարբերությունները:

մատակարարելու եւ ծառայություններ մատուցելու նպատակով լեզվի իմացության նկատմամբ անհարկի կամ անհամաչափ պահանջները, հատկապես մասնավոր հատվածում, կարող են խոչընդոտել աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության հասանելիությունը ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար:[14] Ըստ այդմ, Կողմ հանդիսացող պետությունները պետք է ձեռնարկեն արդյունավետ միջոցներ՝ վերացնելու համար աշխատանքի շուկայի հասանելիությունը խոչընդոտող անհարկի սահմանափակումները, որոնք, մասնավորապես, ազդում են որոշակի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վրա: .Այնպիսի իրավիճակներում, երբ լեզվի իմացության նկատմամբ պահանջներն իրավաչափ պայման են՝ հատկապես հանրային ծառայությունների ոլորտում որոշակի պաշտոններ զբաղեցնելու համար, ապա պետք է ապահովել լեզվի ուսուցման դասընթացներ՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց նկատմամբ խտրականությունը կանխելու համար: Հիմնական սոցիալական նպաստների եւ որոշակի հանրային ծառայությունների հասանելիությունը չպետք է խաթարվի լեզվի իմացության կամ բնակության վայրի նկատմամբ սահմանված անհարկի պահանջներով:

56. Միեւնույն ժամանակ, Կողմ հանդիսացող պետությունները պետք է ապահովեն, որ բնակության վայրի գրանցման գործընթացները լինեն մատչելի, եւ դրանցով ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց նկատմամբ ուղղակի կամ անուղղակի ձեւով չդրսեւորվի խտրական վերաբերմունք: Հարկ եղած դեպքում, ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պետք է ցուցաբերվի գրանցման գործընթացի հետ կապված աջակցություն, իսկ իշխանությունները պետք է իրականացնեն գրանցման գործընթացների կանոնավոր դիտանցում:

---

[14] Տե՛ս, օրինակ, 2003 թվականի մայիսի 22-ին ընդունված՝ Ադրբեջանի վերաբերյալ 1-ին եզրակացության 79-րդ պարբերությունը:

ը) Բնակարանային ապահովման ստանդարտները եւ մասնակցությունը սոցիալ-տնտեսական կյանքին

57. Համապատասխան չափանիշներին չհամապատասխանող բնակարանային պայմանները, որոնք հաճախ ուղեկցվում են որոշակի ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց, հատկապես, գնչուների եւ թափառական ցեղերի ֆիզիկական (տարածական) տարանջատմամբ, զգալիորեն ազդում են սոցիալ-տնտեսական կյանքում մասնակցություն ցուցաբերելու նրանց կարողության վրա եւ կարող են հանգեցնել հետագա աղքատության, մարգինալացման եւ սոցիալական մեկուսացման: Սա հաճախ ավելի սուր բնույթ է կրում բնակության վայրի նկատմամբ նրանց իրավունքների պահպանման իրավական դրույթների բացակայության եւ հարկադիր տեղահանման նկատմամբ նրանց խոցելիության, այդ թվում՝ գույքի փոխհատուցման հետ կապված գործընթացների հետեւանքների պատճառով:[15]

58. Կողմ հանդիսացող պետությունները պետք է ձեռնարկեն արդյունավետ միջոցներ՝ վերացնելու համար խտրական գործելակերպերը, որոնք կարող են հանգեցնել որոշակի ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մեկուսացմանը եւ մարգինալացմանը:[16] Առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել բնակարանային հարցերում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ մարդու իրավունքները լիարժեք հարգելուն:

59. Ավելին, Կողմ հանդիսացող պետությունները պետք է մշակեն ոլորտային համալիր քաղաքականության ուղղություններ՝ համապատասխան չափանիշներին չհամապատասխանող բնակարանային պայմանների եւ հիմնական ենթակառուցվածքի հասանելիության հետ կապված խնդիրները բարձրացնելու

---

[15] Տե՛ս, օրինակ, 2005 թվականի նոյեմբերի 24-ին ընդունված՝ Ռումինիայի վերաբերյալ 2-րդ եզրակացության 80-րդ եւ 82-րդ պարբերությունները:

[16] Տե՛ս, օրինակ, 2005 թվականի փետրվարի 24-ին ընդունված՝ Չեխիայի Հանրապետության վերաբերյալ 2-րդ եզրակացության 52-րդ եւ 57-րդ պարբերությունները, 2005 թվականի մայիսի 26-ին ընդունված՝ Սլովակիայի Հանրապետության վերաբերյալ 2-րդ եզրակացության 46-րդ պարբերությունը եւ 2005 թվականի մայիսի 26-ին ընդունված՝ Սլովենիայի վերաբերյալ 2-րդ եզրակացության 67-րդ եւ 68-րդ պարբերությունները:

համար, որոնք ազդում են որոշակի փոքրամասնություններին պատկանող անձանց վրա: Կողմ հանդիսացող պետությունները պետք է խթանեն նաեւ պատշաճ բնակարանային ապահովման հավասար հասանելիությունը, մասնավորապես՝ սուբսիդավորված բնակարանային ապահովման բարելավմամբ:

60. Այդպիսով, իշխանությունները պետք է ապահովեն բնակարանային ապահովման վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացին եւ հարակից ծրագրերին շահագրգիռ անձանց պատշաճ մասնակցությունը՝ նրանց սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու նպատակով՝ այդ անձանց կարիքների՝ համարժեք ձեւով բավարարումն ապահովելու համար: Նման քաղաքականության ուղղությունները պետք է համապատասխանաբար ֆինանսավորվեն: Կողմ հանդիսացող պետությունների համար հավասարապես կարեւոր է ապահովել, որ տեղական իշխանությունները պահպանեն բնակարանային ապահովման հարցերում խտրականության դեմ պայքարին ուղղված գործող օրենսդրությանը, քանի որ մեկուսացումը խթանող միջոցները հաճախ ձեռնարկվում են տեղական մակարդակով:

թ) Առողջապահությունը եւ մասնակցությունը սոցիալ-տնտեսական կյանքին

61. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք առանձնահատուկ դժվարություններ են ունենում առողջապահական ծառայությունների մատչելիության տեսանկյունից. մի իրավիճակ, որը բխում է տարբեր գործոններից, ինչպիսիք են խտրականությունը, աղքատությունը, աշխարհագրական մեկուսացումը, մշակութային տարբերությունները կամ լեզվական խոչընդոտները: Առողջապահական ծառայությունների մատչելիության հետ կապված դժվարությունները բացասաբար են անդրադառնում սոցիալ-տնտեսական կյանքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցության վրա:

62. Կողմ հանդիսացող պետությունները պետք է ապահովեն ազգային փոքրամասնություններին պատկանող շահագրգիռ անձանց արդյունավետ մասնակցությունը նրանց առողջապահության վրա անդրադարձող խնդիրները

բարձրացնելուն ուղղված միջոցների մշակման, կիրառման, դիտանցման եւ գնահատման գործընթացներին: Սա անհրաժեշտ է, որպեսզի առողջապահական ծառայություններն ավելի արդյունավետորեն արձագանքեն նրանց հատուկ կարիքներին:

63. Առողջապահական ծառայություններ մատուցող բուժական եւ վարչական անձնակազմը պետք է անցնեն համապատասխան վերապատրաստում ազգային փոքրամասնությունների մշակութային եւ լեզվաբանական առանձնահատկությունների վերաբերյալ, որպեսզի կարողանան պատշաճորեն արձագանքել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հատուկ կարիքներին:[17] Ազգային փոքրամասնություններին պատկանող առողջապահական միջնորդներին կամ օգնականներին աշխատանքի ընդունելը կարող է նպաստել բարելավվող հաղորդակցությանը եւ առավել պատշաճ մոտեցումներին:[18]

64. Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել՝ առողջապահական համակարգում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հավասարապես արդյունավետ ծառայություններ մատուցելու վրա[19]: Հավասար հնարավորությունների վերաբերյալ քաղաքականության ուղղությունները չպետք է սահմանափակվեն միայն առողջապահական համակարգի հասանելիությամբ: Դրանք պետք է նպատակ ունենան նաեւ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մատուցել այնպիսի որակյալ ծառայություններ, որոնք միեւնույն ազդեցությունն ունեն, ինչ բնակչության մնացած մասին տրամադրվող ծառայությունները:

---

[17] Տե՛ս նաեւ վերը նշված (գ) մասում արված դիտարկումները:

[18] Տե՛ս, օրինակ, 2005 թվականի փետրվարի 24-ին ընդունված՝ Չեխիայի Հանրապետության վերաբերյալ 2-րդ եզրակացության 55-րդ պարբերությունը եւ 2005 թվականի մայիսի 26-ին ընդունված՝ Սլովակիայի Հանրապետության վերաբերյալ 2-րդ եզրակացության 56-րդ եւ 57-րդ պարբերությունները:

[19] Տե՛ս, օրինակ, 2005 թվականի մայիսի 26-ին ընդունված՝ Սլովակիայի Հանրապետության վերաբերյալ 2-րդ եզրակացության 56-րդ եւ 57-րդ պարբերությունները

2) ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ[20]

65. Կողմ հանդիսացող պետությունների մեծ մասում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ մշակութային կյանքին մասնակցության արդյունավետությունը սերտորեն կապված է՝ հանրային քաղաքականությանը ինչպես նաեւ հասարակական եւ տնտեսական կյանքում նրանց ցուցաբերած մասնակցության մակարդակի հետ: Շրջանակային կոնվենցիայով, մի կողմից, պաշտպանվում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ պահպանելու եւ զարգացնելու իրենց սեփական մշակութային ժառանգությունը եւ ինքնությունը, մյուս կողմից՝ հանդուրժողականության եւ միջմշակութային երկխոսության ոգով հիմնական մշակութային կյանքում արդյունավետ մասնակցություն ցուցաբերելու եւ փոխգործակցելու նրանց իրավունքը: Ըստ այդմ, սույն Գլխում ներկայացված եզրահանգումները բխում են 5-րդ, 6-րդ եւ 15-րդ հոդվածների համակցված վերլուծությունից:

---

[20] Տե՛ս նաեւ Եվրոպայի խորհրդի այլ փաստաթղթային տեքստերը մշակութային բազմազանության եւ լրատվամիջոցների վերաբերյալ, ինչպիսիք են՝

- *«Եվրոպայի Խորհրդի՝ միջմշակութային երկխոսության զարգացման ռազմավարության մասին» Ֆարոյի հռչակագիրը*՝ ընդունված Եվրոպական մշակութային կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների մշակութային գործերի համար պատասխանատու նախարարների կողմից՝ 2005 թվականի հոկտեմբերի 27-ից 28-ը Ֆարոյում կայացած հանդիպման ժամանակ:
- *«Միջմշակութային երկխոսության եւ ընդհարումների կանխարգելման մասին» հռչակագիրը*՝ ընդունված Եվրոպայի մշակույթի նախարարների համաժողովում 2003 թվականի հոկտեմբերի 22-ին:
- «Զանգվածային լրատվամիջոցների քաղաքականության վերաբերյալ» Եվրոպական նախարարական 7-րդ համաժողով. *Ինտեգրում եւ բազմազանություն՝ եվրոպական լրատվամիջոցների եւ հաղորդակցության վերաբերյալ քաղաքականության նոր սահմանները*: Տեքստերն ընդունվել են (MCM(2005)005):
- *«Լրատվամիջոցների եւ հանդուրժականության մշակույթի խթանման մասին»* Նախարարների կոմիտեի թիվ R (97) 21 առաջարկությունը *եւ դրան կից Բացատրական հուշագիրը*:
- Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով. թիվ 1773 (2006) առաջարկություն. *հեռարձակվող լրատվամիջոցներում փոքրամասնությունների լեզուների օգտագործման մասին 2003 թվականի ուղեցույցները եւ Եվրոպայի խորհրդի չափանիշները. անհրաժեշտ է ընդլայնել համագործակցությունը եւ փոխհամաձայնեցված գործունեությունը ԵԱՀԿ-ի հետ*:
- Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով. *«Միգրանտների, էթնիկ փոքրամասնությունների եւ լրատվամիջոցների մասին»* թիվ 1277 (1995) առաջարկություն:

66. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վրա անդրադարձող մշակութային քաղաքականության ուղղություններ մշակելիս եւ կիրարկելիս՝ կարեւոր է, որ իշխանությունները պատշաճորեն խորհրդակցեն վերջիններիս հետ՝ նրանց կարիքներին առավել արդյունավետորեն արձագանքելու համար: Ազգային փոքրամասնությունները, իրենց ներկայացուցիչների միջոցով, պետք է արդյունավետորեն ներգրավված լինեն իրենց մշակութային նախաձեռնություններին հանրային աջակցություն ցուցաբերելու գործընթացում: Ավելին, երբ առկա են նման աջակցությունն ուղղորդող հատուկ ինստիտուտներ, ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք պետք է պատշաճորեն ներկայացված լինեն եւ կարողանան մասնակցել համապատասխան որոշումների ընդունման գործընթացին:[21]

67. Ապակենտրոնացման գործընթացները կարող են կարեւոր դեր կատարել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու մեջ՝ մշակութային կյանքին արդյունավետ մասնակցություն ցուցաբերելու համար: Մշակութային ինքնավարության կարգավորումները, որոնք ուղղված են, մասնավորապես, մշակույթի եւ կրթության ոլորտում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավասություններ պատվիրակելուն, կարող են հանգեցնել մշակութային կյանքում փոքրամասնությունների ավելի ակտիվ մասնակցությանը:[22]

68. Բացի դրանից, մշակութային կյանքում փոքրամասնությունների մասնակցությունը վերլուծելիս, կարեւոր է գնահատել լրատվամիջոցներում նրանց ցուցաբերած մասնակցության աստիճանը: Կարեւոր է, որ փոքրամասնությունները հնարավորություն ունենան ստեղծելու եւ օգտագործելու իրենց սեփական լրատվամիջոցները: Այնուամենայնիվ, հավասարապես կարեւոր է, որ նրանց համար մատչելի լինեն հիմնական լրատվամիջոցները, եւ նրանք ներկայացվեն դրանցում՝ հասարակության լայն շերտերին հետաքրքրող հարցերի շուրջ իրենց տեսակետն

---

[21] Տե՛ս, օրինակ, 2006 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունված՝ Նորվեգիայի վերաբերյալ 2-րդ եզրակացության 60-րդ եւ 69-րդ պարբերությունները:

[22] Տե՛ս նաեւ ստորեւ նշված 133–ից եւ 137-րդ պարբերությունները ինքնավարության վերաբերյալ կարգավորումների մասին:

արտահայտելու համար:

3) ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

69. Հանրային կյանքում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցության արդյունավետությունը քննարկելիս՝ Խորհրդատվական կոմիտեն ուսումնասիրել է ընդհանուր ներգրավվածությունը որոշումներ ընդունելու գործընթացում: Այն ոչ միայն ուսումնասիրել է տարբեր մեխանիզմներում նրանց ներկայացվածությունը եւ մասնակցությունը, այլեւ առանձնահատուկ ուշադրություն է հատկացրել որոշումներ ընդունելու գործընթացների վրա նրանց ունեցած ազդեցության արդյունավետությանը: Կողմ հանդիսացող պետություններում առկա՝ որոշումներ ընդունելու տարբեր կարգավորումները պետք է հաշվի առնեն հասարակության կազմը եւ արտացոլեն դրա բազմազանությունը:

70. Արդյունավետ մասնակցությունը ներառում է հնարավոր ձեւերի լայն շրջանակ, ինչպիսիք են՝ տեղեկությունների փոխանակումը, ոչ պաշտոնական եւ պաշտոնական խորհրդատվությունը, ինչպես նաեւ մասնակցությունը որոշումներ ընդունելու գործընթացներին: Սա կարելի է ապահովել տարբեր ուղիներով՝ սկսած խորհրդատվական մեխանիզմներից մինչեւ խորհրդարանական հատուկ կարգավորումներ: Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ազգային փոքրամասնությունների պատկանող կանանց եւ տղամարդկանց հավասար մասնակցության վրա:

71. Ցանկացած մեխանիզմ ընտրելու դեպքում, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց պետք է տրամադրվեն իրական հնարավորություններ՝ ազդեցություն ունենալու համար որոշումներ ընդունելու վրա՝ որոնց արդյունքները պետք է պատշաճորեն արտացոլեն իրենց կարիքները: Ըստ Խորհրդատվական կոմիտեի՝ զուտ խորհրդատվությունը, որպես այդպիսին, բավարար միջոց չէ արդյունավետ մասնակցության համար:

72. Ընտրովի մարմիններում, պետական կառավարման մարմիններում,

դատական համակարգում եւ իրավապահ մարմիններում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց ներկայացվածությունը եւ մասնակցությունն էական, սակայն ոչ բավարար պայման է արդյունավետ մասնակցության համար: Ընտրովի մարմինների տարբեր մակարդակներում նրանց ներգրավվածությունը կախված է ընտրական օրենսդրությամբ նախատեսված սահմանադրական ավանդույթներից եւ երաշխիքներից: Ընտրական համակարգի ընտրությունը եւ մեթոդները հաճախ ուղղակի ազդեցություն են ունենում որոշումներ ընդունելու գործընթացում փոքրամասնությունների մասնակցության արդյունավետության վրա: Բացի ընտրական երկու հիմնական համակարգերով (մեծամասնական եւ համամասնական) նախատեսված հնարավորություններից, կարող են ներմուծվել այնպիսի հատուկ մեխանիզմներ, ինչպիսիք են՝ հատկացված տեղերը, քվոտաները, որակյալ մեծամասնությունը եւ կրկնակի քվեարկության կամ «վետոյի» իրավունքը: Բացի դրանից, մշակութային ինքնավարությունը կարող է ամրապնդել փոքրամասնությունների մասնակցությունը հանրային քաղաքականության մեջ:

73. Փոքրամասնությունների հարցերով զբաղվող մասնագիտացված պետական կառույցները նպաստում են, որպեսզի փոքրամասնությունների կարիքները հետեւողականորեն ինտեգրվեն պետական քաղաքականության ուղղություններում: Փոքրամասնություններին առնչվող խնդիրները, այնուամենայնիվ, չպետք է մնան բացառապես մասնագիտացված պետական մարմինների իրավասության դաշտում: Քաղաքականության ուղղությունների մշակման գործընթացում ներգրավված սուբյեկտները պետք է ներառեն փոքրամասնություններին առնչվող խնդիրներն ընդհանուր քաղաքականության ուղղությունների մեջ՝ բոլոր մակարդակներում եւ ընթացակարգային բոլոր փուլերում:

74. Լրատվամիջոցները պետք է լայն հասարակությանը տեղեկացնեն փոքրամասնություններին առնչվող խնդիրների վերաբերյալ՝ հանդուրժողականության ոգին եւ միջմշակութային երկխոսությունը խթանելու նպատակով:

ա) Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունն օրենսդրական գործընթացին

i. Քաղաքական կուսակցությունները

75. Ազգային փոքրամասնության պատկանող ցանկացած անձի՝ Շրջանակային կոնվենցիայի 7-րդ հոդվածով ամրագրված՝ խաղաղ հանրահավաքներ անցկացնելու ազատության եւ միավորման ազատության իրավունքը, մասնավորապես, ենթադրում է, քաղաքական կուսակցություններ եւ (կամ) կազմակերպություններ ձեւավորելու իրավունքը: Էթնիկ կամ կրոնական հիմքով քաղաքական կուսակցությունների ձեւավորումն արգելող օրենսդրությունը կարող է հանգեցնել այս իրավունքի անհարկի սահմանափակումների: Ամեն դեպքում, ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի միջազգային իրավունքի նորմերին եւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված սկզբունքներին:[23]

76. Ազգային փոքրամասնությունների պատկանող կազմակերպությունների եւ քաղաքական կուսակցությունների գրանցումը պետք է ենթարկվի որոշ պայմանների: Այնուամենայնիվ, նման պահանջները պետք է մշակվեն այնպես, որ ոչ ողջամիտ կամ անհամաչափ կերպով չսահմանափակեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար նման կազմակերպություններ ստեղծելու հնարավորությունները եւ, ըստ այդմ, չսահմանափակեն քաղաքական կյանքում եւ որոշումներ ընդունելու գործընթացում նրանց մասնակցության հնարավորությունները: Սա, մասնավորապես, վերաբերում է գրանցման համար

[23] Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածով, որը երաշխավորում է խաղաղ հավաքների ազատության եւ այլոց հետ միավորվելու ազատության իրավունքը, նախատեսվում է, որ այդ իրավունքների իրականացումը ենթակա չէ որեւէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակական անդորրի, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով:

անհրաժեշտ թվային եւ աշխարհագրական պայմաններին:[24]

77. Կողմ հանդիսացող պետությունները պետք է ապահովեն, որ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց ներկայացնող կամ ներառող կուսակցությունները համապատասխան հնարավորություններ ունենան նախընտրական քարոզարշավի ժամանակ: Սա կարող է ենթադրել նախընտրական գովազդների տեղադրումը փոքրամասնությունների լեզուներով: Իշխանությունները պետք է նաեւ դիտարկեն փոքրամասնությունների լեզուների գործածումը թույլատրելու հնարավորությունները՝ հանրային հեռուստատեսության եւ ռադիոյի՝ նախընտրական քարոզարշավներին նվիրված ծրագրերում եւ քվեաթերթիկներում ու այլ ընտրական նյութերում՝ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից ավանդաբար կամ զգալի թվով բնակեցված տարածքներում:[25]

78. Թե՛ հիմնական, եւ թե՛ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից ձեւավորված քաղաքական կուսակցությունները կարող են կարեւոր դեր կատարել՝ հանրային քաղաքականության մեջ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը դյուրացնելու առումով: Հիմնական կուսակցությունների կողմից իրենց թեկնածուների ընտրության ներքին ժողովրդավարական գործընթացները վճռորոշ են՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունն ապահովելու համար: Այնուամենայնիվ, հիմնական քաղաքական կուսակցություններում փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավումն անպայմանորեն չի նշանակում, որ փոքրամասնությունների շահերն արդյունավետորեն ներկայացված են:

79. Այն երկրներում, որտեղ առկա են փոքրամասնությունների խոշոր

---

[24] Տե՛ս, օրինակ, 2004 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունված՝ Մոլդովայի վերաբերյալ 2-րդ եզրակացության 74-ից 77-րդ պարբերությունները, 2006 թվականի մայիսի 11-ին ընդունված՝ Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ 2-րդ եզրակացության 261-րդ պարբերությունը եւ 2004

[25] Տե՛ս, օրինակ, 2001 թվականի սեպտեմբերի 14-ին ընդունված՝ Էստոնիայի վերաբերյալ 1-ին եզրակացությունը 55-րդ եւ 56-րդ պարբերությունները:

կուսակցություններ, կարեւոր է ապահովել, որ միեւնույն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց շահերը ներկայացնել ցանկացող՝ փոքրամասնությունների կողմից ձեւավորված այլ կուսակցությունները կամ քաղաքական կազմակերպություններն այդ անելու հնարավորություն ունենան:

ii. Ընտրական համակարգերի կառուցվածքն ազգային, տարածաշրջանային եւ տեղական մակարդակներում

80. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը ընտրական գործընթացներին վճռորոշ է, քանի որ օրենսդրական միջոցներ եւ նրանց առնչվող հանրային քաղաքականության ուղղություններ մշակելիս՝ փոքրամասնությունները հնարավորություն կունենան արտահայտելու իրենց տեսակետները:

81. Նկատի ունենալով, որ ընտրական համակարգի ընտրությունը Կողմ հանդիսացող պետությունների ինքնիշխան իրավունքն է, Խորհրդատվական կոմիտեն ընդգծել է, որ կարեւոր է ընդգրկել փոքրամասնություններին հուզող հարցերը հանրային օրակարգում: Սա կարելի է իրականացնել կա'մ ընտրովի մարմիններում փոքրամասնությունների ներկայացուցիչների առկայությամբ եւ (կա՛մ) նրանց հուզող հարցերը ընտրովի մարմինների օրակարգում ներառելու միջոցով:

82. Խորհրդատվական կոմիտեն նկատել է, որ երբ ընտրական օրենքներով նախատեսված է սահմանաչափ նախատեսող պահանջ, ընտրական գործընթացում ազգային փոքրամասնությունների մասնակցության վրա դրա հավանական բացասական ազդեցությունը պետք է պատշաճորեն հաշվի առնվի:[26] Սահմանաչափ նախատեսող պահանջներից ազատումն օգնում է բարելավելու ընտրովի մարմիններում ազգային փոքրամասնությունների մասնակցությունը:

---

[26] Տե'ս, օրինակ, 2005 թվականի մայիսի 11-ին ընդունված՝ Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ 2-րդ եզրակացությունը, 262-րդ պարբերությունը:

83. Ընտրովի մարմիններում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց ներկայացվածությունն ապահովող սահմանադրական երաշխիքները, ողջամիտ ժամանակահատվածում, պետք է ուղեկցվեն գործող արդյունավետորեն կիրառվող օրենսդրությամբ եւ հարակից միջոցներով:[27] Խորհրդատվական կոմիտեն էական է համարում, որ ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք մասնակցեն կամ նրանց հետ խորհրդակցեն այդպիսի օրենսդրությունը մշակելու եւ դրա կիրառումը դիտանցելու գործընթացում:

84. Կողմ հանդիսացող պետությունները պետք է խրախուսեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց, այդ թվում՝ սոցիալապես անապահովների մասնակցությունը տեղական ընտրովի մարմիններում: Այս առումով, Խորհրդատվական կոմիտեն ընդգծել է, որ անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել բնակության վայրի նկատմամբ որոշակի պահանջների՝ տեղական ընտրություններում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցության վրա ունեցած հնարավոր բացասական ազդեցության վրա:[28]

85. Ընտրովի մարմիններում կանանց համաչափ ներկայությունը խթանելուն ուղղված ընտրական դրույթները կարող են դրական ազդեցություն ունենալ հանրային քաղաքականության մեջ ազգային փոքրամասնությունների պատկանող կանանց մասնակցության վրա:

86. Ցանկացած կարգավորում ընտրելու դեպքում, անհրաժեշտ է իրականացնել պարբերական դիտարկումներ՝ ապահովելու համար, որ դրանք պատշաճորեն արտահայտեն հասարակական զարգացումները եւ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կարիքները:

87. Եթե ընտրովի մարմիններում ազգային փոքրամասնությունների պատկանող

---

[27] Տե՛ս, օրինակ, 2003 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված՝ Սերբիայի եւ Մոնտենեգրոյի վերաբերյալ 1-ին եզրակացությունը, 102-րդ պարբերությունը:

[28] Տե՛ս, օրինակ, 2006 թվականի հոկտեմբերի 6-ին ընդունված՝ Իռլանդիայի վերաբերյալ 2-րդ եզրակացությունը, 104-րդ պարբերությունը:

անձանց ներկայացվածության հնարավորությունները գործնականում սահմանափակ են, ապա անհրաժեշտ է դիտարկել այլընտրանքային ուղիներ, ինչպիսիք են՝ հատուկ կարգավորումները՝ բարելավելու համար նրանց մասնակցությունը: [29]

iii. Վարչական սահմանները եւ ընտրատարածքները

88. Ընտրատարածքների փոփոխությունները կարող են ազդել հանրային քաղաքականության մեջ, այդ թվում՝ ընտրովի մարմիններում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը ապահովելու վրա: Ընտրատարածքների փոփոխությունների հանգեցնող բարեփոխումները քննարկելիս՝ Կողմ հանդիսացող պետությունները պետք է ապահովեն, որ դրանք վտանգի չենթարկեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց ընտրվելու հնարավորությունները:[30]

89. Վարչական սահմանների փոփոխությանն ուղղված բարեփոխումները քննարկելիս՝ իշխանությունները պետք է խորհրդակցեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց հետ եւ լրջորեն դիտարկեն նման բարեփոխումների ազդեցությունը հանրային քաղաքականության մեջ վերջիններիս մասնակցության վրա:[31]

90. Ցանկացած դեպքում, Կողմ հանդիսացող պետությունները չպետք է ձեռնարկեն այնպիսի միջոցներ, որոնք ուղղված են նվազեցնելու ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից բնակեցված տարածքների բնակչության համաչափությունը կամ սահմանափակելու Շրջանակային

---

[29] Տե՛ս 2004 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունված՝ Դանիայի վերաբերյալ 2-րդ եզրակացությունը, 154-րդ պարբերությունը:

[30] Տե՛ս, օրինակ, 2005 թվականի մայիսի 26-ին ընդունված՝ Սլովակիայի Հանրապետության վերաբերյալ 2-րդ եզրակացությունը, 115-րդ պարբերությունը եւ 2002 թվականի մարտի 1-ին ընդունված՝ Ուկրաինայի վերաբերյալ 1-ին եզրակացությունը, 69-րդ պարբերությունը:

[31] Տե՛ս, օրինակ, 2004 թվականի մայիսի 27-ին ընդունված՝ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության վերաբերյալ 1-ին եզրակացությունը, 103-րդ պարբերությունը:

կոնվենցիայով պաշտպանվող իրավունքները:[32] Ընդհակառակը, նման տարածքներում վարչական բարեփոխումները պետք է, մասնավորապես, ուղղված լինեն փոքրամասնությունների մասնակցության հնարավորություններն ընդլայնելուն:

iv. Հատկացված տեղերի համակարգը

91. Կարգավորումները, որոնցով նախատեսվում են ազգային փոքրամասնությունների համար հատկացված եւ (կամ) բաշխված տեղեր, շատ դեպքերում արդյունավետ միջոցներ են որոշումների ընդունման գործընթացում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունն ընդլայնելու համար: Հատկացված տեղերի նախատեսումը, անկախ այն հանգամանքից՝ բաշխված է ազգային տարբեր փոքրամասնությունների միջեւ, թե նախատեսված է մեկ խմբի համար, այն եղանակներից մեկն է, որով կարող է ապահովվել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց ներկայացվածությունը ընտրովի մարմիններում:

92. «Բաշխված տեղերի» համակարգը, մասնավորապես, հարմարեցված է սակավաթիվ փոքրամասնությունների կարիքներին: Որպեսզի այդ կարգավորումն էական ազդեցություն ունենա բաշխված տեղի (տեղերի) միջոցով ներկայացվող ազգային փոքրամասնությունների մասնակցության վրա, կարեւոր է, որպեսզի համապատասխան փոքրամասնությունները համակարծիք լինեն այն ընդհանուր ռազմավարության եւ միասնական նպատակների շուրջ, որոնք պետք է իրականացվեն տվյալ ընտրովի մարմնում ներկայացված լինելու միջոցով: Բաշխված տեղեր զբաղեցնող ընտրված ներկայացուցիչները պետք է բարեխղճորեն ներկայացնեն ընտրատարածքի ազգային փոքրամասնությունների պատկանող բոլոր անձանց հուզող հարցերը: Տարբեր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հերթագայումը կարող է հանգեցնել նրան, որ այն ձեռք բերի բաշխվող տեղի իմաստ:

---

[32] Տե՛ս Շրջանակային կոնվենցիայի 16-րդ հոդվածը:

93. Որպեսզի երաշխավորված տեղ ապահովող կարգավորումը էապես նպաստի արդյունավետ մասնակցությանը, կարեւոր է, որ փոքրամասնության ընտրված ներկայացուցիչները արդյունավետորեն ներգրավվեն որոշումների ընդունման գործընթացներում: Ավելին, նրանք պետք է իրական հնարավորություն ունենան ազդելու ընտրովի մարմնի կողմից ընդունված որոշումների վրա՝ ներառյալ այն որոշումները, որոնք կոնկրետ չեն վերաբերում ազգային փոքրամասնություններին: Հետեւաբար, կարեւոր է, որ նրանք ընտրովի մարմնում ունենան խոսքի եւ ձայնի իրավունք եւ որ նրանց դերը չսահմանափակվի զուտ դիտորդի կարգավիճակով:[33]

94. Այնուամենայնիվ, Խորհրդատվական կոմիտեն այն կարծիքին է, որ պարզապես նման միջոցառումների իրականացումն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մեխանիկորեն չի տալիս որոշումների ընդունման գործընթացում իրական եւ էական ազդեցություն ունենալու հնարավորություն:[34]

v. Խորհրդարանական գործելակերպը

95. Այն Կողմ հանդիսացող պետություններում, որտեղ կան փոքրամասնությունների հարցերով զբաղվող խորհրդարանական հատուկ կոմիտեներ, այդ մարմինները մի շարք դեպքերում նպաստել են նրան, որ որոշումների ընդունման գործընթացներում հաշվի առնվեն ազգային փոքրամասնություններին հուզող հարցերը: Հատկապես արդյունավետ է եղել այդ կոմիտեներում փոքրամասնությունների լեզուների կիրառման հնարավորությունը: Այնուամենայնիվ, չպետք է անտեսվի մյուս խորհրդարանական կոմիտեների աշխատանքներին արդյունավետ մասնակցության կարեւորությունը, որոնք նաեւ զբաղվում են փոքրամասնությունների պաշտպանության հարցերով: Խորհրդարանական կոմիտեներում կուսակցության կտրվածքով իրականացվող համագործակցությունն ամրապնդում է այն ջանքերը, որոնք կնպաստեն

---

[33] Տե՛ս 2001 թվականի ապրիլի 6-ին ընդունված՝ Կիպրոսի վերաբերյալ 1-ին եզրակացությունը, 41-րդ պարբերությունը:

[34] Տե՛ս, օրինակ, 2006 թվականի նոյեմբերի 25–ին ընդունված՝ Կոսովոյի վերաբերյալ եզրակացությունը (UNMIK), 110-րդ պարբերությունը:

փոքրամասնությունների հարցերը քաղաքական գործընթացներում ներառելուն:

96. Որպեսզի այդ կոմիտեների աշխատանքն արդյունավետ լինի, կարեւոր է, որ անհրաժեշտ ուշադրություն դարձվի նրանց առաջարկություններին, մասնավորապես, ազգային փոքրամասնությունների վերաբերյալ օրենսդրությունը մշակելիս կամ փոփոխելիս: Բացի դրանից, կանոնավոր երկխոսություն պետք է վարվի կոմիտեների եւ համապատասխան գերատեսչությունների միջեւ, ինչպես նաեւ նրանց եւ փոքրամասնությունների միությունների միջեւ:

vi. «Վետոյի» իրավունքը

97. Կողմ հանդիսացող որոշ պետություններում խորհրդարանների՝ ազգային փոքրամասնություններ ներկայացնող անդամներն ուղղակիորեն իրենց վրա ազդող օրենսդրության նախագծի նկատմամբ ունեն «վետո–տեսակի» իրավունք: Այս մեխանիզմը, որը որոշակի հանգամանքներում կարող է արժեքավոր գործիք լինել, ներմուծվել է Կողմ հանդիսացող մի քանի պետությունների կողմից, որպեսզի փոքրամասնությունների ներկայացուցիչները հնարավորություն ունենան ընդունել կամ մերժել ուղղակիորեն իրենց վրա ազդող հարցերի վերաբերյալ օրենսդրությունը:

98. Խորհրդատվական կոմիտեն, այնուամենայնիվ, նշել է, որ «վետոյի» իրավունքը սովորաբար կարելի է կիրառել այն իրավական ակտերի նկատմամբ, որոնք *բացառապես* վերաբերում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքներին եւ կարգավիճակին:[35] Հետեւաբար, հիմնավորված չէր լինի երաշխավորել փոքրամասնությունների պատկանող անձանց պատշաճ ներգրավվածությունը այն հարցերում, որոնք ուղղակիորեն կամ բացառապես չեն վերաբերում նրանց:

99. Մտահոգություններ կան նաեւ, որ «վետոյի» կամ «քվազի վետոյի» այդ

[35] Տե՛ս 2002 թվականի սեպտեմբերի 12-ին ընդունված՝ Սլովենիայի վերաբերյալ 1-ին եզրակացությունը, 71-րդ պարբերությունը:

համակարգը հատուկ հանգամանքներում եւ որոշ դեպքերում կարող է կաթվածահար անել պետական հաստատությունները:[36] Այդպիսի դեպքերում, օրենսդրական գործընթացում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց տեսակետներ արտահայտելու հնարավորություն տվող այլ եւ (կամ) լրացուցիչ ուղիները կարող են գնահատվել որպես «վետոյի» համակարգի փոխարինում կամ լրացում:

vii. Քաղաքացիության պահանջները

100. Քաղաքացիությունը կարեւոր տարր է, որը կարող է էապես ազդել հանրային քաղաքականությանը մասնակցություն ցուցաբերելու վրա: Փորձը ցույց է տվել, որ քաղաքացիության պահանջները կարող են խոչընդոտել հանրային քաղաքականության որոշ ոլորտներում արդյունավետ մասնակցությանը: Խորհրդատվական կոմիտեն այն հարցը քննելիս, թե որ անձանց նկատմամբ է կիրառվում Շրջանակային կոնվենցիան, շատ դեպքերում, Կողմ հանդիսացող պետություններին կոչ է արել, որպեսզի նրանք իրենց որդեգրած մոտեցման մեջ կիրառեն ճկունություն եւ ընդգրկունություն:[37] Ավելին, Խորհրդատվական կոմիտեն հետեւողականորեն շեշտել է այն փաստը, որ ազգային փոքրամասնությունների պատկանող քաղաքացի չհանդիսացողների նկատմամբ Շրջանակային կոնվենցիայի կիրառումը կարող է բարելավել հանդուրժողականության ոգին, միջմշակութային երկխոսությունը եւ համագործակցությունը:

101. Թեեւ օրինական է քաղաքացի չհանդիսացողների համար նրանց ընտրելու եւ ընտրվելու իրավունքի հետ կապված որոշ սահմանափակումներ սահմանելը, սակայն այդ սահմանափակումները չպետք է կիրառվեն հարկ եղածից ավելի չափով: Քանի դեռ քաղաքացիության պահանջները կարող են կիրառվել խորհրդարանական ընտրությունների առնչությամբ, Կողմ հանդիսացող պետությունները խրախուսվում են ազգային փոքրամասնությունների պատկանող

---

[36] Տե՛ս 2004 թվականի մայիսի 27–ին ընդունված՝ Բոսնիայի եւ Հերցեգովինայի վերաբերյալ 1-ին եզրակացությունը, 100-րդ եւ 101-րդ պարբերությունները:

[37] Տե՛ս նաեւ սույն Մեկնաբանության հավելվածում ներկայացված դիտարկումները, որոնք վերաբերում են Շրջանակային կոնվենցիայի 3-րդ հոդվածին:

անձանց տեղական ինքնակառավարման մարմինների եւ մշակութային ինքնավարության կառավարման խորհրդի ընտրություններում քվեարկելու եւ իրենց թեկնածությունը առաջադրելու հնարավորություն տալու համար:[38] Քաղաքացիությունն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար չպետք է պայման հանդիսանա արհեստակցական միություններին եւ քաղաքացիական հասարակության այլ միավորումներին անդամագրվելու համար: Սա հատկապես կարեւոր է Կողմ հանդիսացող այն պետություններում, որտեղ քաղաքացիության վերաբերյալ տարվող քաղաքականությունը գտնվել է փոփոխվող վիճակում:

viii. Լեզվի իմացության պահանջները

102. Խորհրդարանական եւ տեղական ընտրությունների թեկնածուներին ներկայացվող՝ լեզվի իմացության պահանջները չեն համապատասխանում Շրջանակային կոնվենցիայի 15–րդ հոդվածին: Դրանք բացասաբար են անդրադառնում հանրային քաղաքականության մեջ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց արդյունավետ մասնակցության վրա:[39]

բ) Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը մասնագիտացված պետական մարմինների միջոցով

103. Ազգային, տարածաշրջանային կամ տեղական կառավարման մարմիններում ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող մասնագիտացված պետական կառույցների հիմնադրումը կարող է օգնել՝ բարելավելու համար հանրային քաղաքականությանը փոքրամասնությունների մասնակցությունը: Եթե նման մարմիններ չեն ստեղծվել, ապա Կողմ հանդիսացող պետությունները խրախուսվում են կազմավորելու դրանք կամ, առնվազն, նշանակելու՝ հանրային ծառայությունների շրջանակներում փոքրամասնությունների հարցերով հետադարձ

---

[38] Տե՛ս, օրինակ, 2001 թվականի սեպտեմբերի 14-ին ընդունված՝ Էստոնիայի վերաբերյալ 1-ին եզրակացությունը, 55-րդ պարբերությունը:
[39] Տե՛ս Էստոնիայի վերաբերյալ 1-ին եզրակացությունը, 55-րդ պարբերությունը:

կապն ապահովող մարմինների:

104. Մասնագիտացված մարմինները չպետք է փոխարինեն, այլ պետք է լրացնեն ազգային փոքրամասնությունների խորհրդատվական մեխանիզմները: Դրանց արդյունավետությունը մեծամասամբ կախված է խորհրդատվական մարմինների հետ համակարգման եւ փոխլրացման մակարդակից: Այս մասնագիտացված մարմիններում ազգային փոքրամասնության ծագում ունեցող եւ (կամ) փոքրամասնության լեզվին տիրապետող անձանց աշխատանքի ընդունումը եւ նրանց աշխատատեղերի պահպանումը կարող է նպաստել այդ մարմինների արդյունավետ աշխատանքին:

105. Մասնագիտացված պետական մարմինները չպետք է փոխարինեն հիմնական պետական հաստատությունների՝ փոքրամասնությունների խնդիրների հետ կապված աշխատանքը: Մասնագիտացված մարմինների հիմնական դերը փոքրամասնությունների պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության նախաձեռնումն ու համակարգումն է: Հետեւաբար, դրանք համարվում են կառավարության եւ փոքրամասնությունների միջեւ հաղորդակցության կարեւոր ուղիներ: Կարեւոր է, որ համապատասխան պետական հաստատությունները տեղյակ լինեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կարիքների մասին եւ, որ փոքրամասնությունների խնդիրները ներառվեն այլ պետական ծառայությունների աշխատանքում՝ հիմնական խնդիրների հետ միասին:[40]

գ) Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը խորհրդատվական մեխանիզմների միջոցով

i. Խորհրդատվական մեխանիզմների ստեղծումը

106. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց խորհրդատվությունը

[40] Տե՛ս, օրինակ, 2006 թվականի մայիսի 12-ին ընդունված՝ Հայաստանի վերաբերյալ 2-րդ եզրակացությունը, 122-րդ պարբերությունը:

հատկապես կարեւոր է այն երկրներում, որտեղ բացակայում են խորհրդարանում եւ այլ ընտրովի մարմիններում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը հնարավոր դարձնող կարգավորումները: Այնուամենայնիվ, միայն խորհրդատվությունը բավարար մեխանիզմ չէ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց *արդյունավետ* մասնակցությունն ապահովելու համար:

107. Կարեւոր է ապահովել, որ խորհրդատվական մարմիններն ունենան հստակ իրավական կարգավիճակ, որ դրանց խորհրդատվության դիմելու պարտավորությունն ամրագրված լինի օրենքով, եւ որ դրանց ներգրավվածությունը որոշումներ ընդունելու գործընթացում կրի կանոնավոր եւ մշտական բնույթ: Թեեւ նման կառույցների գործունեության առումով առկա են տարբեր մոդելներ[41], կարեւոր է ապահովել, որ համապատասխան կանոնակարգերը շարադրված լինեն բավականին մանրամասն՝ ապահովելու համար արդյունավետ եւ համահունչ խորհրդատվություն:

108. Իշխանությունները կարող են նաեւ կազմակերպել համատեղ խորհրդատվություններ տարբեր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ եւ (կամ) ուղղակի երկխոսության մեջ մտնել առանձին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ: Թեեւ առաջինը կարեւոր մեթոդ է ընդհանուր հարցերը բարձրացնելու եւ տարբեր ազգային փոքրամասնությունների միջեւ երկխոսությունը բարելավելու համար, երկրորդը, օրինակ, հարմար է քննարկելու այն խնդիրները, որոնք վերաբերում են միայն որեւէ կոնկրետ ազգային փոքրամասնության: Խորհրդատվական կոմիտեն նկատել է, որ որոշ դեպքերում, խորհրդատվությունը միայն ազգային փոքրամասնությունների բարձրագույն մարմինների հետ բավարար չէ՝ հաշվի առնելու համար առանձին ազգային փոքրամասնություններին հուզող խնդիրները:

---

[41] Տե՛ս նաեւ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության հարցերով փորձագետների կոմիտեի Փոքրամասնությունների վերաբերյալ խորհրդատվական մեխանիզմների ձեռնարկը (www.coe.int/minorities):

ii. Խորհրդատվական մեխանիզմների ներկայացվածությունը

109. Անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել խորհրդատվական մարմինների «ներգրավվածությանը» եւ «ներկայացվածությանը»: Ընդ որում, սրանով, ի թիվս այլոց, ենթադրվում է, որ եթե առկա են խառը մարմիններ, ապա փոքրամասնությունների ներկայացուցիչների եւ պաշտոնյաների միջեւ հարաբերակցությունը չպետք է հանգեցնի վերջիններիս գերակայությանն աշխատանքում: Բոլոր ազգային փոքրամասնությունները պետք է ներկայացված լինեն՝ ներառյալ ավելի սակավաթիվ ազգային փոքրամասնությունները:[42]

110. Խորհրդատվական մարմինների ներկայացվածությունը կախված է նաեւ փոքրամասնությունների կազմակերպություններից եւ նշանակումներ կատարելու նրանց ընթացակարգերից: Ավելին, երբ առանձին ազգային փոքրամասնության առումով կոնկրետ խորհրդատվական մեխանիզմներ են սահմանվում, անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել խմբի ներսում բազմազանությանը:[43]

111. Խորհրդատվական մարմինների վստահելիության ապահովման համար, կարեւոր է, որ նշանակումներ կատարելու նրանց ընթացակարգերը լինեն թափանցիկ եւ իրականացվեն ազգային փոքրամասնությունների հետ սերտ խորհրդատվությամբ: Կողմ հանդիսացող պետությունները պարբերաբար խրախուսվում են վերանայելու նշանակումներ կատարելու ընթացակարգերը՝ համոզվելու համար, որ համապատասխան մարմինները հնարավորինս ներառական են, պահպանում են իրենց անկախությունը կառավարություններից եւ իրապես ներկայացնում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց շրջանում առկա տեսակետների լայն բազմազանություն: Կարեւոր է ապահովել, որ խորհրդատվական մարմիններում ներգրավվեն ազգային փոքրամասնությունների պատկանող կանայք:

---

[42] Տե՛ս, օրինակ, 2006 թվականի հոկտեմբերի 6-ին ընդունված՝ Իռլանդիայի վերաբերյալ 2–րդ եզրակացությունը , 112-րդ պարբերությունը:

[43] Տե՛ս, օրինակ, 2006 թվականի մարտի 1–ին ընդունված՝ Գերմանիայի վերաբերյալ 2–րդ եզրակացությունը, 152-րդ պարբերությունը:

112. Խորհրդատվությունը չպետք է սահմանափակվի միայն այն անձանց հուզող հարցերով, ովքեր ապրում են փոքրամասնությունների կողմից ավանդաբար կամ զգալի թվով բնակեցված տարածքներում: Սրանով նաեւ ենթադրվում է, որ օրակարգը չպետք է ընդգրկի միայն մեծաթիվ փոքրամասնություններին հուզող հարցերը:

iii. Խորհրդատվական մեխանիզմների տեսակները

113. Թեեւ ժամանակավոր *(ad hoc)* խորհրդատվությունները կարող են օգտակար լինել որեւէ կոնկրետ հարցի առումով, Կողմ հանդիսացող պետությունները խրախուսվում են սահմանելու կանոնավոր խորհրդատվական մեխանիզմներ եւ մարմիններ՝ կառավարությունների եւ փոքրամասնությունների ներկայացուցիչների միջեւ երկխոսությունը ինստիտուցիոնալացնելու նպատակով:[44]

114. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց հետ խորհրդատվական մեխանիզմները, հարկ եղած դեպքում, չպետք է բացառեն անկախ փորձագետների հետ զուգահեռ խորհրդատվությունը: Խորհրդատվական կոմիտեն նկատել է, որ որոշ դեպքերում այդ փորձագիտական խորհրդատվությունն օգտակար լրացում է խորհրդատվական ընթացակարգին:

115. Բացի ազգային կառույցներից, տարածաշրջանային եւ տեղական խորհրդատվական մեխանիզմները, որոշ դեպքերում, լրացուցիչ օգտակար ուղիներ են՝ որոշումներ ընդունելու գործընթացում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցության համար, հատկապես, այն իրավասության ոլորտներում, որտեղ որոշումներ ընդունող ուժերն ապակենտրոնացվել են: Նման իրավիճակներում կարեւոր է, որ տեղական եւ տարածաշրջանային իշխանությունները կանոնավոր կերպով ներգրավեն այս խորհրդատվական մարմիններին որոշումներ ընդունելու իրենց գործընթացներում, երբ քննարկվում են

---

[44] Տե՛ս, օրինակ, 2006 թվականի մարտի 2–ին ընդունված՝ Ֆինլանդիայի վերաբերյալ 2–րդ եզրակացությունը, 148-ից 151-րդ պարբերությունները:

փոքրամասնությունների հետ կապված խնդիրները:[45]

iv. Խորհրդատվական մարմինների դերն ու գործունեությունը

116. Էական է, որ հստակորեն սահմանվեն խորհրդատվական մարմինների իրավական կարգավիճակը, դերը, պարտականությունները, անդամակցությունն ու ինստիտուցիոնալ դիրքը: Դա ներառում է խորհրդատվության, կառուցվածքների եւ այն կանոնակարգերի շրջանակը, որոնցով ղեկավարվում են վերոնշյալ մարմինների անդամների նշանակման ու աշխատանքային մեթոդների իրականացման գործընթացները: Կարեւոր է ապահովել, որ խորհրդատվական մարմիններն ունենան իրավասուբյեկտություն, քանի որ վերջինիս բացակայությունը կարող է նվազեցնել նրանց արդյունավետությունը եւ սահմանված առաքելությունը գործուն կերպով իրականացնելու կարողությունը: Խորհրդատվական մարմինների աշխատանքային մեթոդները պետք է լինեն թափանցիկ, նրանց ընթացակարգերի կանոնները՝ հստակ սահմանված: Խորհրդատվական մարմինների գործունեության հրապարակայնությանը պետք է աջակցել այնպես, որ դրա արդյունքում բարձրանա թափանցիկության մակարդակը:

117. Կողմ հանդիսացող պետություններին կոչ է արվում ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն կտան ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրազեկ լինելու խորհրդատվական նման մարմինների գոյության, մանդատի ու գործունեության մասին: Բացի դրանից, կարեւոր է, որ այս մարմինների կողմից անցկացվող հանդիպումները լինեն հաճախակի եւ կանոնավոր հիմունքներով:[46]

118. Խորհրդատվական մարմինները պետք է պատշաճ ձեւով խորհրդակցեն նոր օրենսդրության նախագծեր մշակելիս՝ ներառյալ սահմանադրական այն

---

[45] Տե՛ս, օրինակ, 2005 թվականի փետրվարի 24–ին ընդունված՝ Չեխիայի Հանրապետության վերաբերյալ 2–րդ եզրակացությունը, 171–րդ եւ 172–րդ պարբերությունները:

[46] Տե՛ս, օրինակ, 2002 թվականի մարտի 1-ին ընդունված՝ Ուկրաինայի վերաբերյալ 1-ին եզրակացության 72-րդ պարբերությունը եւ 2003 թվականի մայիսի 22–ին ընդունված՝ Ադրբեջանի վերաբերյալ 1-ին եզրակացության 73–րդ եւ 74-րդ պարբերությունները:

բարեփոխումները, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով վերաբերում են ազգային փոքրամասնություններին: Կողմ հանդիսացող պետությունները պետք է ապահովեն խորհրդատվություն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց եւ դրանց խորհրդատվական կառույցների համար՝ միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների, այդ թվում՝ նրանց շահերին վերաբերող հաշվետվություն ներկայացնելու պարտականությունների առնչությամբ:

119. Պետք է հասանելի դարձնել խորհրդատվական մեխանիզմների արդյունավետ գործունեությանը նպաստող համարժեք ռեսուրսները:[47]

դ) Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց ներկայացուցչությունն ու մասնակցությունը հանրային կառավարմանը, դատաիրավական եւ գործադիր գործընթացներին

120. Հանրային կառավարումը պետք է հնարավորինս արտացոլի հասարակության բազմազանությունը: Սա նշանակում է, որ Կողմ հանդիսացող պետություններին կոչ է արվում սահմանել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց հանրային հատվածում ներգրավելուն նպաստող ուղիները՝ ներառյալ նրանց ընդգրկումը դատաիրավական եւ իրավապահ մարմիններում: Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը հանրային կառավարման գործընթացներին նաեւ կարող է օգնել վերջիններիս՝ ազգային փոքրամասնությունների կարիքներին ավելի լավ արձագանքելու հարցում:[48]

121. Այս նպատակին հասնելու ուղիներից մեկը իրավական հիմքի ապահովումն է՝ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց հանրային կառավարման ոլորտում ընդգրկելու գործընթացին աջակցելու համար: Կարեւոր է, որ նման երաշխիքները մեկտեղվեն իրագործման համարժեք միջոցների հետ:

---

[47] Տե՛ս նաեւ ստորեւ նշված 137–րդ եւ 138–րդ պարբերություններում արված դիտարկումները:

[48] Տե՛ս, օրինակ, 2001 թվականի նոյեմբերի 30–ին ընդունված՝ Միացյալ Թագավորության վերաբերյալ 1-ին եզրակացության 96-ից 99–րդ պարբերությունները:

122. Կարեւոր է նաեւ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ դատաիրավական եւ արդարադատության իրականացման գործընթացներին մասնակցությանն օժանդակելու հարցը: Այս առումով ձեռնարկվելիք միջոցառումները պետք է իրականացվեն այնպես, որ լիովին երաշխավորվի դատաիրավական գործընթացի անկախությունն ու արդյունավետ գործունեությունը:[49]

123. Պետք է խուսափել այնպիսի միջոցառումներից, որոնք նպատակաուղղված են տարբեր խմբերի ներկայացվածության խիստ մաթեմատիկական հավասարության ապահովմանը, ինչը հաճախ ենթադրում է զբաղեցվող պաշտոնների ոչ անհրաժեշտ ավելացում: Դրանք վտանգում են պետական կառուցվածքի արդյունավետ գործունեությունը եւ կարող են հանգեցնել հասարակության մեջ առանձին կառույցների ստեղծմանը:

124. Գնչուները, թափառաշրջիկները, բնիկ ժողովուրդները եւ սակավաթիվ ազգային փոքրամասնությունները հաճախ, մասնավորապես հանրային կառավարման ոլորտում, կատարում են ցածր վարձատրվող աշխատանք, եւ այս հարցն իշխանությունների առանձնահատուկ ուշադրությունն է պահանջում: Նրանց զբաղվածությունը հանրային կառավարման ոլորտում կարող է նպաստել ավելի դրական պատկերի ստեղծմանը եւ, ընդհանուր առմամբ, լայն հասարակության մեջ այսպիսի փոքրամասնությունների իրազեկվածության բարձրացմանը, ինչն իր հերթին կարող է բարելավել նրանց մասնակցության ցուցանիշը բոլոր մակարդակներում:

125. Կարող են նախատեսվել նպատակային միջոցառումներ՝ ուղղված ազգային որոշ փոքրամասնություններին աշխատանքով ապահովելու գործընթացում նախկինում տեղ գտած անհավասարությունների որոշակի հանգամանքներին՝ ներառյալ ամենամարգինալացված փոքրամասնությունների: Սա ենթադրում է, որ բոլոր աշխատակիցները պետք է լինեն բավարար չափով կրթված եւ իրավասու՝

[49] Տե՛ս, օրինակ, 2004 թվականի հոկտեմբերի 1–ին ընդունված՝ Խորվաթիայի վերաբերյալ 2-րդ եզրակացությունը, 154-ից 159–րդ պարբերությունները:

իրենց աշխատանքն արդյունավետ իրականացնելու համար:[50]

126. Հանրային կառավարում իրականացնող անձնակազմի նկատմամբ սահմանված՝ պետական լեզվի իմացության պահանջները չպետք է լինեն ավելին, քան անհրաժեշտ է տվյալ պաշտոնը զբաղեցնելու կամ ծառայությունն իրականացնելու համար: Պահանջները, որոնք անհիմն կերպով սահմանափակում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց հանրային կառավարման ոլորտում ներգրավելու հնարավորությունների հասանելիությունը, անհամատեղելի են Շրջանակային կոնվենցիայի չափանիշների հետ:[51] Անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրվի նպատակային աջակցություն՝ ազգային փոքրամասնություններից դիմողների կամ անձնակազմի համար պաշտոնական լեզուն սովորելու գործընթացը դյուրացնելու համար:

127. Համապարփակ տվյալներն ու վիճակագրությունն վճռորոշ են՝ հանրային ծառայությունների մեջ փոքրամասնությունների մասնակցության վրա զբաղվածության, առաջխաղացման եւ համանման այլ գործելակերպերի ազդեցությունը գնահատելու համար: Դրանք արդյունավետ են օրենսդրությանն ու քաղաքականությանն առնչվող համարժեք միջոցառումներ մշակելու համար, որոնք վերաբերում են հայտնաբերված թերություններին: Ազգային փոքրամասնությունների վիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրումը պետք է իրականացվի՝ անձնական տվյալների պաշտպանության մասին միջազգային չափանիշներին համապատասխան,[52] նաեւ պետք է դիտարկվի ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց՝ այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրության իրավունքը: Համապատասխան ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները պետք է ներգրավված լինեն տվյալների հավաքագրման ամբողջ գործընթացի մեջ, եւ նման տվյալների

---

[50] Տե՛ս նաեւ վերը նշված 36-րդ եւ 37–րդ պարբերություններում արված դիտարկումները:

[51] Տե՛ս նաեւ 2003 թվականի մայիսի 22–ին ընդունված՝ Ադրբեջանի վերաբերյալ 1-ին եզրակացությունը, 79-րդ պարբերությունը:

[52] Տե՛ս Եվրոպայի խորհրդի «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան (ETS 108) եւ Նախարարների կոմիտեի թիվ (97) 18 հանձնարարականը վիճակագրական նպատակներով հավաքագրվող եւ մշակվող անձնական տվյալների պաշտպանության մասին:

հավաքման մեթոդները պետք է մշակվեն նրանց հետ սերտ համագործակցությամբ:

128. Ուշադրություն պետք է դարձվի նաեւ գործադիր մարմիններում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցության հարցին: Արդյունավետ մասնակցությունը կարելի է խթանել տարբեր միջոցներով, ինչպիսին է՝ գործադիր կառույցների բոլոր մակարդակներում փոքրամասնությունների ներկայացուցիչների համար նախատեսված՝ զբաղեցվող պաշտոնների ներմուծումը: Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար հանրային պաշտոններին հասանելիությունը բացառելուն ուղղված գործողությունները խտրականության հավանական դրսեւորումներ են:[53]

ե) Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը տեղական կառավարման ձեւերի միջոցով

129. Տեղական կառավարման ձեւերը կարող են կարեւոր դեր կատարել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ որոշումների ընդունման գործընթացում արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման հարցում: Սա հատկապես վերաբերում է այն շրջաններին, որոնք խիտ բնակեցված են ազգային փոքրամասնություններով:

130. Ապահովելու համար, որ ապակենտրոնացման ու իրավասությունների փոխանցման գործընթացները գործնականում դրական ազդեցություն են ունենում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ հասարակական կյանքում մասնակցություն ունենալու վրա, վճռորոշ է տեղական եւ կենտրոնական իշխանությունների համապատասխան իրավասությունների շրջանակների հստակ սահմանումը: Այս առումով հստակության բացակայությունը կարող է նվազեցնել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցության մակարդակը եւ խոչընդոտել փոքրամասնությանը՝ իրենց իսկ գործունեության իրականացման համար անհրաժեշտ հանրային ֆինանսական միջոցների

[53] Տե՛ս, օրինակ, 2004 թվականի մայիսի 27–ին ընդունված՝ Բոսնիայի եւ Հերցեգովինայի վերաբերյալ 1-ին եզրակացությունը, 98-րդ պարբերությունը:

հասանելիությունը: Կարեւոր է նաեւ տեղական իշխանություններին ապահովել համապատասխան ռեսուրսներով՝ իրենց վերապահված հանձնարարություններն արդյունավետ իրականացնելու հնարավորություն տալու համար:[54]

131. Եթե նախատեսվում են տեղական կառավարման ձեւերին վերաբերող բարեփոխումներ, ապա էական է դառնում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց պաշտպանության վրա այս բարեփոխումների ունեցած ազդեցության մանրակրկիտ վերլուծությունը: Այս պարագայում Կողմ հանդիսացող պետությունները խրախուսվում են ապահովելու ուղիներ՝ տարածքային հաստատություններին, ինչպես նաեւ՝ փոքրամասնությունների ներկայացուցիչներին բարեփոխումների գործընթացներում ներգրավելու համար: Մասնավորապես, պետք է ուշադրություն դարձնել այդ միջոցառումների հնարավոր բացասական հետեւանքներին՝ ազգային փոքրամասնություններին պաշտպանելու, առավելապես՝ որոշումներ ընդունելու գործընթացների եւ ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը վերջիններիս համար ապահովելու նպատակով:[55]

132. Անկախ Կողմ հանդիսացող պետությունների կողմից ներդրված տարածքային կառուցվածքից, կենտրոնական իշխանությունները պետք է հավատարիմ մնան իրենց ընդհանուր պատասխանատվությանը, որը բխում է միջազգային պարտավորություններից եւ ազգային իրավական գործունեության շրջանակից այն հարցերի առնչությամբ, որոնք վերաբերում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց ներգրավվածությանը տարբեր բնագավառներում: Այս առումով Կողմ հանդիսացող պետություններին խրախուսվում են երաշխավորելու, որ տեղական իշխանությունները հավատարիմ են Շրջանակային կոնվենցիայից բխող պարտավորություններին: Այդ արդյունքն ապահովելու համար հաճախ անհրաժեշտ են իրազեկվածության բարձրացմանը միտված հատուկ քայլեր՝ տեղական եւ տարածաշրջանային մակարդակով:

---

[54] Տե՛ս նաեւ ստորեւ նշված 138-րդ եւ 139–րդ պարբերություններում արված դիտարկումները:

[55] Տե՛ս, օրինակ, 2005 թվականի նոյեմբերի 25-ին ընդունված՝ Կոսովոյի վերաբերյալ եզրակացությունը, (UNMIK) 113-րդ պարբերությունը:

զ) Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը ինքնավարության կարգավորումների միջոցով

133. Շրջանակային կոնվենցիան չի տրամադրում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց ինքնավարության իրավունքը՝ թե՛ տարածքային, թե՛ մշակութային: Ավելին, Խորհրդատվական կոմիտեն ուսումնասիրել է տարածքային եւ մշակութային ինքնավար կարգավորումների գործունեությունն ու ազդեցությունը ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց վրա՝ Կողմ հանդիսացող այն պետություններում ներգրավվածության վրա, որտեղ նրանք առկա են:

134. Խորհրդատվական կոմիտեն պարզել է, որ Կողմ հանդիսացող այն պետությունները, որտեղ որոշակի պատմական, քաղաքական եւ այլ հանգամանքների արդյունքում առկա են տարածքային ինքնավարության կարգավորումներ, կարող են խթանել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց առավել արդյունավետ մասնակցությունը կյանքի տարբեր բնագավառներում:

135. Խորհրդատվական կոմիտեն տվել է ավելի ծավալուն մեկնաբանություններ մշակութային ինքնավարության կարգավորումների իրականացման վերաբերյալ Կողմ հանդիսացող այն պետություններում, որտեղ դրանք հաստատվել են: Մշակութային ինքնավարության նման կարգավորումները հավաքական սկզբունքով շնորհվել են ազգային որոշակի փոքրամասնության անդամներին՝ անկախ տարածքից: Դրանց նպատակը, ի թիվս այլոց, ազգային փոքրամասնության կազմակերպություններին կարեւոր իրավասություններ փոխանցելն է՝ տվյալ փոքրամասնության մշակույթի, լեզվի եւ կրթության ոլորտներում, ինչպես նաեւ այս առումով դա կարող է ներդրում ունենալ փոքրամասնությունների մշակույթների պահպանման ու զարգացման գործում:

136. Եթե Կողմ հանդիսացող պետությունները նախատեսում են մշակութային ինքնավարության նման կարգավորումներ, համապատասխան սահմանադրական

եւ օրենսդրական դրույթները պետք է ճշգրիտ սահմանեն ինքնավարության համակարգի բնույթը, գործունեության ոլորտը եւ ինքնավար մարմինների իրավասությունների շրջանակը: Բացի դրանից, համապատասխան օրենսդրության մեջ պետք է հստակեցվեն նրանց իրավական կարգավիճակը, նրանց եւ համապատասխան պետական հաստատությունների միջեւ հարաբերությունները, ինչպես նաեւ նախատեսված ինքնավար համակարգի ֆինանսավորումը: Կարեւոր է, որ ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք ընդգրկվեն, իսկ նրանց դիրքորոշումները պատշաճ ձեւով հաշվի առնվեն ինքնավարության կարգավորումներին առնչվող օրենսդրությունը պատրաստելիս կամ փոփոխելիս:

137. Ինքնավար մարմինների համար ընտրական համակարգերի մշակման ժամանակ պետք է առանձնահատուկ դիտարկել ազգային փոքրամասնության համապատասխան ներկայացուցիչներին: Ինքնակառավարման կարգավորումների համար նախատեսված ընտրական համակարգերը պետք է նախատեսեն պաշտպանություն հնարավոր չարաշահումներից:[56]

է) Ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը՝ փոքրամասնություններին առնչվող գործունեության համար

138. Փոքրամասնությունների պաշտպանության գործընթացում ներգրավված մարմինների համար ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը էական է՝ նրանց առաքելությունն իրականացնելու հնարավորություն տալու համար: Սա ենթադրում է միջոցների հասանելիություն՝ խորհրդատվական մեխանիզմների, մշակութային ինքնավարության կարգավորումների եւ կառավարող մարմինների համար, որոնք ընդգրկված են փոքրամասնություններին վերաբերող հարցերի լուծման մեջ՝ բոլոր մակարդակներով:

139. Տրամադրված ռեսուրսները պետք է լինեն հարցում ներգրավված մարմինների ունեցած պատասխանատվություններին համաչափ:

---

[56] Տե՛ս 2000 թվականի սեպտեմբերի 22-ին ընդունված՝ Հունգարիայի վերաբերյալ 1-ին եզրակացությունը, 52-րդ պարբերությունը:

Փոքրամասնությունների ինքնավար մարմինների համար ֆինանսավորման եւ բյուջետային գործառնությունները պետք է մշակվեն այնպես, որ չվտանգեն վերջիններիս գործառնական ինքնավարությունը:[57] Խորհրդատվական մարմինները եւս պետք է ապահովվեն համարժեք ռեսուրսներով՝ ներառյալ կադրային եւ ֆինանսական միջոցները՝ նպաստելու համար նրանց արդյունավետ գործունեությանը: Անհրաժեշտ են նաեւ ռեսուրսներ, որոնք հնարավորություն կտան նրանց արդյունավետորեն հաղորդակցվելու ընտրատարածքների հետ, ինչպես նաեւ դիտանցելու ու գնահատելու նրանց վրա ազդեցություն ունեցող օրենսդրության եւ քաղաքականության իրականացումը:

ը) Լրատվամիջոցը՝ որպես ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց հանրային քաղաքականության մեջ արդյունավետ մասնակցությունն ապահովող աղբյուր

140. Էական է, որ հանրությունը պատշաճ իրազեկվի ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց վերաբերող հարցերի մասին, որը պետք է նաեւ կազմի հիմնական զանգվածային լրատվամիջոցների աշխատանքի մի մասը: Էական է, որ թե՛ հիմնական եւ թե՛ փոքրամասնությունների լրատվամիջոցներն առանցքային դեր կատարեն այդ գործընթացում ոչ միայն տեղեկատվություն փոխանցելու, այլեւ հանդուրժողականությունը խթանելու միջոցով:[58] Միեւնույն ժամանակ, պետք է զերծ մնալ փոքրամասնություններին վերաբերող հարցերը լրատվամիջոցների օգնությամբ ավելորդ անգամ քաղաքականացնելուց: Ավելին, լրատվամիջոցները, մասնավորապես՝ էլեկտրոնային լրատվամիջոցները կարող են դյուրացնել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց հետ խորհրդատվական գործընթացները:

141. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց ներգրավվածությունը

---

[57] Տե՛ս 2004 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունված՝ Հունգարիայի վերաբերյալ 2-րդ եզրակացությունը, 116-ից 119–րդ պարբերությունները:
[58] Տե՛ս նաեւ վերոնշյալ 68-րդ եւ 74–րդ պարբերությունները:

հանրային ծառայության հեռարձակողների, աուդիտորների խորհուրդների եւ լրատվամիջոցներին հարող այլ մարմինների վերահսկողական խորհուրդներում, ինչպես նաեւ արտադրական խմբերում, էական է՝ ազգային փոքրամասնություններին վերաբերող տեղեկությունների համարժեք տարածումն ապահովելու համար: Մասնավոր հատվածում փոքրամասնությունների լեզուներով կամ նրանց առնչվող հարցերի հեռարձակման համար խթանների ապահովումը կարող է օժանդակել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց աճող մասնակցությանը լրատվամիջոցներում:

թ) Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը Շրջանակային կոնվենցիայի դիտանցմանը

142. Շրջանակային կոնվենցիայի դիտանցման գործընթացին ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը վճռորոշ է հավասարակշռված եւ որակյալ արդյունքի հասնելու համար: Շրջանակային կոնվենցիայով կամ փոքրամասնությունների հարցերին առնչվող այլ միջազգային պայմանագրերով պահանջվող Ազգային զեկույցներ կամ այլ գրավոր հաղորդումներ կազմելիս Կողմ հանդիսացող պետությունները պետք է հարգեն Շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածում ամրագրված սկզբունքները եւ խորհրդակցեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց հետ: Այս եւ այլ համատեքստերում կարեւոր է, որպեսզի մասնակիցները, ինչպիսիք են՝ խորհրդատվական մարմինները, չընկալվեն որպես բացառիկ մասնակիցներ, այլ որպեսզի պետական իշխանությունները խորհրդատվական գործընթացում ներգրավեն նաեւ այլ սուբյեկտների, հատկապես փոքրամասնությունների հարցերով զբաղվող եւ (կամ) ոչ կառավարական կազմակերպությունների: Խորհրդատվական կոմիտեն ողջունում է Ազգային զեկույցներում, ինչպես նաեւ Խորհրդատվական կոմիտեի եզրակացությունների մեկնաբանությունների բաժնում փոքրամասնությունների եւ քաղաքացիական հասարակության կողմից արված մեկնաբանությունների ներառումը:

143. Խորհրդատվական կոմիտեն նաեւ ողջունում է ոչ կառավարական

կազմակերպությունների կողմից կազմված այլընտրանքային զեկույցները: Դրանք հաճախ տեղեկատվության արժեքավոր եւ լրացուցիչ աղբյուր են: Դրանք նաեւ վկայում են ոչ կառավարական կազմակերպությունների՝ մարդու իրավունքների միջազգային նորմերի վրա հիմնված կառուցողական երկխոսության մեջ ներգրավելու ցանկության մասին:

144. Էական է, որ ապահովվի խորհրդատվական գործընթացի թափանցիկությունը, եւ որ Կողմ հանդիսացող պետությունները Խորհրդատվական կոմիտեի եզրակացությունների եւ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի բանաձեւերի ամբողջական տեքստը հնարավորինս վաղ եւ լայնորեն հասանելի դարձնեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց եւ հանրության լայն զանգվածներին: Իշխանությունները պետք է ապահովեն, որպեսզի այս եւ դիտանցման մյուս փաստաթղթերը՝ ներառյալ Ազգային զեկույցը, հասանելի լինեն տեղական լեզուներով, որպեսզի այդ փոքրամասնությունները կարողանան ներառական եղանակով մասնակցել գործընթացին:

145. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է Կողմ հանդիսացող պետություններին ստեղծել կանոնավոր խորհրդատվության համակարգ՝ հնարավորություն ընձեռելով փոքրամասնությունների ներկայացուցիչներին քննարկելու իրենց մտահոգությունները Շրջանակային կոնվենցիայի դիտանցման պարբերաշրջանների միջակայքում, լինեն դրանք պարբերական սեմինարների, թե այլ միջոցառումների տեսքով: Այս երկխոսությունը վճռորոշ է կոնկրետ մտահոգություններին արձագանքելու, նաեւ Շրջանակային կոնվենցիայի իրականացման ընթացքում հավատի եւ վստահության ձեւավորման առումով: Այն ստեղծում է հանդուրժողականության եւ երկխոսության մթնոլորտ, որը հնարավորություն է տալիս, որպեսզի յուրաքանչյուր հասարակության համար բազմազանությունը լինի ոչ թե երկպառակության, այլ հարստացման աղբյուր եւ գործոն:

ՄԱՍ IV. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

146. Սույն Մեկնաբանությունը սույն Կոնվենցիայի իրականացման գործում ներգրավված կողմերին Խորհրդատվական կոմիտեի՝ Շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածի եւ հարակից հոդվածների իր մեկնաբանության ամփոփ շարադրանք տրամադրելու ջանքերի արդյունք է: Վերջնական նպատակն է՝ օգնել կյանքի տարբեր ոլորտներում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցության խթանմանը, բարելավել Շրջանակային կոնվենցիայի սկզբունքների իրականացումը եւ օգնել պետական իշխանություններին՝ կառուցելու ավելի ինտեգրված եւ ավելի լավ գործող հասարակություն:

147. Ուղղակիորեն եւ անուղղակիորեն հենվելով Խորհրդատվական կոմիտեի՝ կոնկրետ երկրներին վերաբերող աշխատանքի վրա՝ Մեկնաբանության մեջ հնարավոր տարբերակների վերլուծություն է տրամադրում որոշումների ընդունման գործընթացի սուբյեկտներին, պետական պաշտոնյաներին, հասարակական կազմակերպություններին, գիտաշխատողների եւ այլ շահագրգիռ կողմերին, հատկապես հենց փոքրամասնությունների շրջանում, որպեսզի նրանք փոքրամասնությունների մասնակցության բարելավմանն ուղղված օրենսդրությունը եւ քաղաքականության ուղղությունները նախագծելիս հնարավորություն ունենան կատարելու համարժեք եւ իրազեկ ընտրություն: Կատարվելիք ընտրությունները պետք է համաձայնեցնել իշխանությունների եւ ազգային փոքրամասնությունների հետ՝ դրանց կայունությունն ապահովելու նպատակով: Նաեւ կարեւոր է, որ նրանք հաշվի առնեն մեծամասնություն կազմող բնակչության տեսակետները եւ հարաբերությունների տեսակը, որը գերիշխում է հասարակության տարբեր խմբերի միջեւ:

148. Ակնհայտ է, որ տարբեր ազգային փոքրամասնությունների, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետություններում գերիշխող տարբեր իրավիճակների նկատմամբ կարող են կիրառվել տարբեր լուծումներ: Կողմ հանդիսացող որոշ պետություններում ձեռնարկված միջոցները Խորհրդատվական կոմիտեի կողմից

դիտարկվել են որպես տվյալ հանգամանքներում Շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածի համարժեք իրականացում: Այնուամենայնիվ, կարեւոր է հիշեցնել, որ պարտադիր չէ, որ Կողմ հանդիսացող մի պետությունում արդյունավետ մասնակցության հանգեցրած միջոցը նույն ազդեցությունն ունենա այլ համատեքստում: Հետեւաբար, Կողմ հանդիսացող պետություններին անհրաժեշտ է իրենց երկրի ներսում տիրող իրավիճակի լույսի ներքո գնահատել այն միջոցների կիրառելիությունը եւ արդյունավետությունը, որոնք այլ երկրներում հանգեցրել են ազգային փոքրամասնությունների մասնակցության աճի: Սույն Մեկնաբանության մեջ Խորհրդատվական կոմիտեի նպատակն այն փորձը լուսաբանելն է, որից օգտակար հետեւություններ կարելի է անել՝ ի շահ Կողմ հանդիսացող բոլոր պետությունների:

149. Բացի դրանից, այն փաստը, որ Կողմ հանդիսացող պետությունների կողմից ձեռնարկված գործողությունները կարող են տվյալ հանգամանքներում կամ դիտանցման գործընթացի տվյալ փուլում համարվել գոհացուցիչ, չի նշանակում, որ դրանք բավարար կլինեն՝ ապագայում Շրջանակային կոնվենցիայի չափանիշներին համապատասխանությունն ապահովելու համար: Հետեւաբար, սույն Մեկնաբանությունը նաեւ փորձում է օգնել Կողմ հանդիսացող պետություններին՝ ստեղծելու պայմաններ, որոնք հնարավորություն կտան նրանց հետագայում կայուն կերպով պահպանել Շրջանակային կոնվենցիայի դրույթները եւ ընդունել երկարաժամկետ հեռանկարներ փոքրամասնությունների պաշտպանության եւ հասարակության մեջ հարաբերությունների այն տեսակի մասին, որոնց նրանք ցանկանում են հասնել:

150. Ավելին, թե՛ փոքրամասնությունների, թե՛ մեծամասնությունների հետ կապված իրավիճակը հաստատուն զարգացման մեջ է, եւ ժամանակի ընթացքում նոր հարցեր կառաջանան կամ կծագեն: Սույն Մեկնաբանության մեջ նշված որոշ հարցեր, մասնավորապես սոցիալ-տնտեսական կյանքին մասնակցության ոլորտում, դեռեւս լիովին չեն ուսումնասիրվել եւ վերլուծվել ո՛չ Խորհրդատվական կոմիտեի կողմից՝ իր ըստ երկրների կատարվող աշխատանքում, ո՛չ փոքրամասնությունների

իրավունքների պաշտպանության հարցերում ներգրավված այլ սուբյեկտների կողմից: Անհրաժեշտ է լրացուցիչ ուշադրություն դարձնել նման մի շարք հարցերի, մասնավորապես, տնտեսական, սոցիալական եւ մշակութային կյանքին արդյունավետ մասնակցությանը վերաբերող հարցերին: Հարցերի օրինակները, որոնք լրացուցիչ ուսումնասիրվելու են, տարածվում են խոցելի փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցության վրա բնապահպանական խնդիրների ազդեցությունից մինչեւ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար վարկային եւ բանկային ծառայությունների հասանելիությունը:

151. Հարկ կլինի, որ Խորհրդատվական կոմիտեի կողմից այլ հարցեր եւս վերագնահատվեն դիտանցման հերթական պարբերաշրջաններում, երբ մատչելի դառնա մասնակցության վրա դրանց ազդեցության մասին երկարաժամկետ հեռանկարը: Ինչպես արդեն նշվել է Ներածական դիտարկումներում, սույն փաստաթուղթը պետք է դիտարկվի որպես գործող փաստաթուղթ, որը պետք է լրամշակվի որպես դիտանցման միջոց՝ Շրջանակային կոնվենցիայի ներքո գրանցված առաջընթացի շրջանակներում:

ՀԱՎԵԼՎԱԾ. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 15-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հոդված 3[59]

152. Շրջանակային կոնվենցիայի 3-րդ հոդվածը սահմանում է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրության իրավունքը: Շրջանակային կոնվենցիայի՝ որոշակի սուբյեկտների շրջանակի նկատմամբ գործողությունը ապահովելը կարեւոր է Շրջանակային կոնվենցիայում սահմանված փոքրամասնությունների իրավունքների՝ ներառյալ կյանքի բոլոր ոլորտներում արդյունավետ մասնակցության իրավունքի իրականացման համար: Շրջանակային կոնվենցիայի՝ սուբյեկտների շրջանակի նկատմամբ գործողության իր ուսումնասիրության մեջ Խորհրդատվական կոմիտեն հետեւողականորեն առաջարկել է, որ Կողմ հանդիսացող պետությունները ձեռնպահ մնան Շրջանակային կոնվենցիայի պաշտպանության շրջանակից կամայական կամ չարդարացված բացառություններ կատարելուց եւ ընտրեն «ներառական» մոտեցումը: Շատ դեպքերում այն կոչ է արել Կողմ հանդիսացող պետություններին վերանայել եւ դիտարկել Շրջանակային կոնվենցիայի սուբյեկտների շրջանակի ընդլայնման հարցը՝ հաշվի առնելով այն փաստը, որ հանգամանքները ժամանակի ընթացքում փոփոխվել են:

---

[59] 3(1) Ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ ունի այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրության իրավունք, եւ այդ ընտրությունը կամ այդ ընտրության հետ կապված իրավունքի իրականացումը չի կարող հանգեցնել նրանց համար որեւէ անբարենպաստ իրավիճակի առաջացման:
3(2) Ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք կարող են ինչպես միայնակ, այնպես էլ մյուսների հետ միասին, իրականացնել այն իրավունքները եւ ունենալ այն ազատությունները, որոնք բխում են սույն Շրջանակային կոնվենցիայով ամրագրված սկզբունքներից:

Հոդված 6[60]

153. Շրջանակային կոնվենցիայի 6 (1) հոդվածը կոչ է անում Կողմ հանդիսացող պետություններին խրախուսելու «հանդուրժողականության ոգու եւ միջմշակութային երկխոսության ձեւավորումը» եւ խթանելու «փոխադարձ հարգանքն ու փոխըմբռնումը» իրենց տարածաշրջանում ապրող բոլոր մարդկանց միջեւ: Ինչպես արդեն նշվել է վերեւում[61], կյանքի զանազան ոլորտներում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը կարեւոր գործիք է միջմշակութային երկխոսությունը բարելավելու համար:

154. Միեւնույն ժամանակ, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցության արդյունավետությունը կախված է հասարակության մեջ առկա փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության եւ ճանաչում ունենալու մթնոլորտից: Հետեւաբար, էական է, որ Կողմ հանդիսացող պետությունները միջոցներ ձեռնարկեն խրախուսելու միջմշակութային երկխոսությունը մեծամասնության եւ փոքրամասնությունների, ինչպես նաեւ տարբեր փոքրամասնությունների եւ ընդհանրապես իրենց տարածքում բնակվող բոլոր մարդկանց միջեւ: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն հաճախ է շեշտել ինտեգրման քաղաքականության կարեւորությունը՝ որպես հասարակության մեջ հավասար հնարավորություններ ստեղծելու եւ հասարակական լարվածություններից խուսափելու միջոց:

155. Ավելին, Խորհրդատվական կոմիտեն հաճախ է ընդգծել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցության կարեւորությունը

---

[60] 6(1) Կողմերը խրախուսում են հանդուրժողականության ոգին եւ միջմշակութային երկխոսությունը եւ արդյունավետ միջոցներ են ձեռնարկում՝ խթանելու համար իրենց տարածքում ապրող բոլոր անձանց միջեւ փոխադարձ հարգանքը, փոխըմբռնումն ու համագործակցությունը, անկախ այդ անձանց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական ինքնությունից, մասնավորապես, կրթության, մշակույթի եւ զանգվածային լրատվության միջոցների բնագավառներում:
6(2) Կողմերը պարտավորվում են համապատասխան միջոցներ ձեռնարկել պաշտպանելու այն անձանց, ովքեր կարող են ենթարկվել սպառնալիքների եւ խտրական վերաբերմունքի, թշնամական կամ բռնի գործողությունների՝ իրենց էթնիկական, մշակութային, լեզվական եւ կրոնական ինքնության պատճառով:
[61] Տե՛ս 21-րդ պարբերությունը:

հասարակության լայն շրջանակներում փոքրամասնության մշակույթի մասին իրազեկությունը բարձրացնելու միջոցառումների վերաբերյալ որոշումներ ընդունելու գործընթացում: Սա ներառում է կրթության ոլորտը, մասնավորապես, երբ պետք է որոշում կայացնել ուսումնական նյութերում ազգային փոքրամասնություններին վերաբերող տարրեր ընդգրկելու վերաբերյալ, զանգվածային լրատվամիջոցների ոլորտը, մշակութային քաղաքականության մշակումն ու կիրառումը:

Հոդված 7[62]

156. Կողմ հանդիսացող պետություններից պահանջվում է ապահովել, որպեսզի հարգվի ազգային փոքրամասնությունների պատկանող յուրաքանչյուր անձի խաղաղ հավաքներ անցկացնելու եւ միություններ կազմելու իրավունքը՝ ինչպես նշված է Շրջանակային կոնվենցիայի 7-րդ հոդվածում: Սա ներառում է փոքրամասնության միավորումներ եւ քաղաքական կուսակցություններ ստեղծելու իրավունքները, որոնք փոքրամասնություն հանդիսացող անձանց մասնակցության կարեւոր ձեւերից են: Կողմ հանդիսացող պետությունները պետք է ձեռնպահ մնան այս իրավունքի իրականացման ժամանակ անհիմն միջամտություններից եւ պայմաններ ստեղծեն, որոնք թույլ կտան փոքրամասնության միավորումներին եւ կուսակցություններին ստանալու իրավասուբյեկտիվություն եւ օգտվելու դրանից, ինչպես նաեւ ազատորեն գործելու: Հավաքներ անցկացնելու եւ միավորումներ ստեղծելու իրավունքը նախապայման է 15-րդ հոդվածի դրույթներից օգտվելու համար, թեպետ այն ինքնին բավարար չէ արդյունավետ մասնակցություն ապահովելու համար:

---

[62] Կողմերը պարտավորվում են հարգել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի՝ խաղաղ հանրահավաքներ անցկացնելու, միավորումների մեջ ընդգրկվելու, խոսքի, մտքի, խղճի եւ դավանանքի ազատության իրավունքները:

Հոդված 9[63]

157. 9 (1) հոդվածը պաշտպանում է ազգային փոքրամասնության պատկանող անձի իրավունքը ազատորեն ստանալու եւ տարածելու տեղեկատվություն եւ արտահայտելու գաղափարներ փոքրամասնության լեզվով, հետեւաբար, նրան հնարավորություն ընձեռելով ընդհանրապես մասնակցելու հանրային քննարկումներին եւ հանրային քաղաքականությանը, մասնավորապես զանգվածային լրատվամիջոցների միջոցով: Ավելին, 9 (1) հոդվածը Կողմ հանդիսացող պետություններից պահանջում է ապահովել, որպեսզի լրատվամիջոցների մատչելիության հարցում ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք չենթարկվեն խտրականության: Շրջանակային կոնվենցիայի 9 (4) հոդվածով իշխանություններից պահանջվում է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար լրատվամիջոցների մատչելիությունը դյուրացնելու համար:

158. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար զանգվածային լրատվամիջոցների հասանելիությունն ու մասնակցությունը ներառում է մի քանի տարածաչափեր: Նրանք պետք է մուտք ունենան լրատվամիջոցներ՝ որպես լսարանի մի մաս, որպես լրատվամիջոցների սեփականատերեր եւ որպես հիմնական լրատվամիջոցներում փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

159. Հիմնական եւ փոքրամասնությունների լրատվամիջոցների մատչելիության ապահովումը ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար մեծապես նպաստում է հասարակության մեջ, մասնավորապես, մշակութային կյանքում նրանց արդյունավետ մասնակցությանը: Այն դյուրացնում է փոքրամասնությունների մշակույթի եւ ինքնության վերաբերյալ լայն հասարակության իրազեկումը: Ավելին, ազգային փոքրամասնությունների համար իրենց սեփական լրատվամիջոցները ստեղծելու եւ դրանցից օգտվելու

[63] 9(4) Իրենց իրավական համակարգի շրջանակներում կողմերը համապատասխան միջոցներ են ձեռնարկում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար լրատվամիջոցների մատչելիությունը դյուրին դարձնելու եւ հանդուրժողականություն ու մշակութային բազմակարծության մթնոլորտ ձեւավորելու համար:

հնարավորությունն ինքնին հանրային քաղաքականության մեջ եւ մշակութային կյանքում մասնակցության արդյունավետ միջոց է: Դա կարող է նաեւ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց բերել սոցիալ-տնտեսական ուղղակի կամ անուղղակի օգուտներ:

Հոդված 10[64]

160. Բանավոր եւ գրավոր, մասնավոր եւ հանրային կյանքում, ինչպես նաեւ վարչական մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուները ազատորեն կիրառելու իրավունքը կարեւոր գործոն է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը խթանելու համար: Սա, մասնավորապես, վերաբերում է ավանդաբար կամ զգալի թվով ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածքներում ապրող, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց:[65] Օրինակ՝ քաղաքացիական ծառայողներին նշանակելու ՝ փոքրամասնության լեզվի իմացությամբ անձանց նպաստող քաղաքականության ուղղությունները դրական եղանակներ են՝ հանրային կառավարման մեջ փոքրամասնության մասնակցությունը խթանելու եւ բարելավելու համար: Նմանապես, վարչական մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուն օգտագործելու հնարավորությունը կարող է նպաստել այդ մարմինների հետ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց առավել արդյունավետ շփումներին: Տեղական ընտրովի մարմիններում փոքրամասնությունների լեզուն օգտագործելու հնարավորությունը կարող է թույլ

---

[64] 10(2) Ավանդաբար կամ զգալի թվով ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածքներում, եթե այդ անձինք խնդրել են, եւ այնտեղ, որտեղ այդպիսի խնդրանքը համապատասխանում է իրական կարիքներին, Կողմերն իրենց հնարավորությունների սահմաններում ձգտում են ապահովել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան այդ անձանց եւ վարչական իշխանությունների միջեւ հարաբերություններում օգտագործել փոքրամասնության լեզուն:
10(1) Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությունների պատկանող յուրաքանչյուր անձի՝ անձնական եւ հասարակական կյանքում, բանավոր եւ գրավոր, ազատորեն եւ առանց խոչընդոտների իր փոքրամասնության լեզուն օգտագործելու իրավունքը:

[65] Ավանդաբար կամ զգալի թվով ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում, եթե այդ անձինք խնդրել են, եւ այնտեղ, որտեղ այդպիսի խնդրանքը համապատասխանում է իրական կարիքներին, Կողմերն իրենց հնարավորությունների սահմաններում ձգտում են ապահովել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան այդ անձանց եւ վարչական մարմինների միջեւ հարաբերություններում օգտագործել փոքրամասնության լեզուն:

տալ ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց առավել արդյունավետ մասնակցելու որոշումներ ընդունելու գործընթացին: Հակառակ դրան, խիստ լեզվական պահանջները կարող են լրջորեն խոչընդոտել ազգային փոքրամասնությունների մասնակցությանը կյանքի որոշակի ոլորտներում, մասնավորապես, սոցիալ-տնտեսական կյանքում եւ ընտրական գործընթացներում: Այնուամենայնիվ, պաշտոնական լեզվում հմտանալու կարեւորությունը չպետք է թերագնահատվի, քանի որ դա նույնպես նպաստում է ազգային փոքրամասնությանը պատկանող անձի արդյունավետ մասնակցությանը:[66]

Հոդվածներ 12, 13 եւ 14

161. Շրջանակային կոնվենցիայի 12-րդ, 13-րդ եւ 14-րդ հոդվածներն ամփոփ ներկայացնում են կրթության ոլորտին վերաբերող առավել լայն շրջանակ ունեցող դրույթները, որոնք մանրամասնորեն վերլուծվել են Խորհրդատվական կոմիտեի կողմից 2006 թվականին ընդունված կրթության վերաբերյալ մեկնաբանության մեջ:[67]

162. 12 (1) հոդվածը պահանջում է, որ Կողմ հանդիսացող պետությունները միջոցներ ձեռնարկեն ազգային փոքրամասնությունների, ինչպես նաեւ բնակչության մեծամասնության մշակույթի, լեզվի, պատմության եւ կրոնի մասին գիտելիքների ձեռքբերումը խթանելու համար: 6 (1) հոդվածի[68] հետ համատեղ 12-րդ հոդվածը այսպիսով Կողմ հանդիսացող պետությունների համար նպատակ է սահմանում խթանելու փոխըմբռնման եւ միջմշակութային երկխոսության մթնոլորտի ստեղծումը, որը ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց արդյունավետ մասնակցության նախապայման է հանդիսանում: Ինչպես ընդգծվում է 12 (2) հոդվածում, այս նպատակն իրագործելու համար համապատասխան դասավանդման եւ այլ նյութերի հասանելիության՝ ուսուցիչների համարժեք

---

[66] Տե՛ս նաեւ 14-րդ հոդվածի վերաբերյալ ստորեւ բերված դիտարկումները:
[67] Տե՛ս Խորհրդատվական կոմիտեի կողմից 2006թ.-ի մարտի 2-ին ընդունված՝ Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ Շրջանակային կոնվենցիայի կրթության մասին մեկնաբանությունը:
[68] Տե՛ս վերոնշյալ 152 –րդ պարբերությունը:

վերապատրաստման եւ ուսուցիչների ու ուսանողների փոխանակումները խթանելու անհրաժեշտություն կա: Ավելին, սույն հոդվածով Խորհրդատվական կոմիտեն հաճախ առաջարկել է, որպեսզի իշխանությունները ապահովեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը կրթական օրենսդրության մշակման, ինչպես նաեւ մասնավորապես իրենց վերաբերող կրթական քաղաքականության եւ ծրագրերի դիտանցման եւ գնահատման մեջ:

163. Շրջանակային կոնվենցիայի 12 (3) հոդվածը հատկապես կարեւորվում է 15-րդ հոդվածը վերլուծելու առումով, քանի որ այն պահանջում է Կողմ հանդիսացող պետություններից կրթության բոլոր մակարդակներում մասնակցության հավասար հնարավորություններ ստեղծել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար՝ ներառյալ մասնագիտական ուսուցումը եւ մեծահասակների համար նախատեսված կրթությունը:

164. 14 (1) եւ 2-րդ հոդվածները,[69] մի կողմից, սահմանում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքը սովորելու իրենց փոքրամասնության լեզուն եւ նախատեսում են, որ որոշակի պայմաններում Կողմ հանդիսացող պետությունները պետք է աշխատեն ստեղծել համապատասխան հնարավորություններ՝ փոքրամասնության լեզվով ուսուցում ստանալու կամ ուսումնառելու համար: Սա կարեւոր միջոց է իրենց ազգային ինքնությունը եւ մշակույթը պահպանելու եւ զարգացնելու համար, ինչը նաեւ սահմանված է 5–րդ հոդվածում:[70] 14 (3) հոդվածը, մյուս կողմից, սահմանում է, որ վերոհիշյալ դրա կիրառումը չպետք է հակասի պաշտոնական լեզվի ուսուցմանը: Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց պաշտոնական լեզվի բավարար

---

[69] 14 (1) Կողմերը պարտավորվում են ընդունել իր փոքրամասնության լեզուն սովորելու ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը:
14 (2) Ավանդաբար կամ զգալի թվով ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածքներում, այդ անձանց կողմից բավարար պահանջի դեպքում, Կողմերն իրենց հնարավորությունների սահմաններում եւ իրենց կրթական համակարգերի շրջանակներում համապատասխան պայմաններ են ստեղծում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար սովորելու իրենց լեզուն կամ կրթություն ստանալու այդ լեզվով:
14 (3) Սույն հոդվածի 2-րդ պարբերության կիրառումը չպետք է գործի ի վնաս պաշտոնական լեզուն սովորելուն կամ այն դասավանդելուն:
[70] Տե՛ս վերոնշյալ 13-րդ եւ 14-րդ պարբերությունները:

գիտելիքը իրապես էական է կյանքի տարբեր ոլորտներում նրանց մասնակցության եւ մեծամասնական հասարակության մեջ նրանց ինտեգրման համար:[71] Հետեւաբար, Շրջանակային կոնվենցիայի հիմքում ընկած հիմնարար դրույթները, որոնք արդեն նկարագրված են վերոշարադրյալ 13-ից 15-րդ պարբերություններում՝ 4-րդ, 5-րդ եւ 15-րդ հոդվածների միջեւ առկա կապի առնչությամբ, եւս ամբողջությամբ արտացոլված են 14-րդ հոդվածում:

165. Խորհրդատվական կոմիտեն շատ դեպքերում շեշտել է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց արդյունավետ մասնակցության կարեւորությունը 14-րդ հոդվածով նախատեսված իրավունքները իրագործելու մեջ: Մասնավորապես, վճռորոշ է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց ներգրավել այն որոշումներում, որոնք ընդունվում են փոքրամասնության լեզվի կրթության կազմակերպման կապակցությամբ[72]՝ ապահովելու համար, որ կրթության այս տեսակը բավարարի ազգային փոքրամասնությունների կարիքները:

Հոդված 17 եւ Հոդված 18[73]

166. Շրջանակային կոնվենցիայի 17 (1) հոդվածը նախատեսում է, որ Կողմ հանդիսացող պետությունները չեն խոչընդոտում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց միջսահմանային ազատ եւ խաղաղ կապերի հաստատմանը եւ պահպանմանը, մասնավորապես, միեւնույն ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց հետ: 17 (2) հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել,

---

[71] Տե՛ս նաեւ 10-րդ հոդվածի ներքո բերված դիտարկումները:

[72] Տե՛ս նաեւ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության Շրջանակային կոնվենցիայի կրթության մասին մեկնաբանությունը, որն ընդունվել է Խորհրդատվական կոմիտեի կողմից 2006թ.-ի մարտի 2-ին:

[73] 17 (1) Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքին՝ հաստատել եւ պահպանել ազատ եւ խաղաղ միջսահմանային շփումներ այլ պետություններում օրինական բնակվող անձանց հետ: Սա, մասնավորապես, վերաբերում է այն անձանց, որոնց հետ նրանք ունեն էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական միեւնույն ինքնությունը կամ մշակութային ընդհանուր ժառանգություն:

17 (2) Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ ազգային եւ միջազգային մակարդակներով հասարակական կազմակերպությունների գործունեությանը մասնակցելու իրավունքին:

18 (2) Անհրաժեշտության դեպքում, Կողմերը միջոցներ են ձեռնարկում անդրսահմանային համագործակցությունը խթանելու համար:

որպեսզի ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք իրենց ակտիվ նպաստը ունենան քաղաքացիական հասարակության մեջ՝ ազգային եւ միջազգային մակարդակներով:

167. Ինչպես 17-րդ հոդվածը, 18-րդ հոդվածը կոչ է անում նախաձեռնողական մոտեցում ցուցաբերել պետությունների միջեւ անդրսահմանային համագործակցության հարցում: Միջսահմանային համագործակցությունը կարող է զգալիորեն նպաստել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց հանրային քաղաքականության մեջ, սոցիալական, տնտեսական եւ մշակութային կյանքում մասնակցությանը: